ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2022 - 2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ռեկտոր՝ կ.գ.թ. Ն.Սարիբեկյան

ԵՐԵՎԱՆ 2023

№	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	Էջ
1.	Նախաբան	3
2.	Վարչական կազմ, ամբիոնի վարիչներ	5
3.	Ընդունելություն	6
4.	Գիտական խորհրդի կազմը	7
5.	Գիտական խորհրդի գործունեությունը	8
6.	Ռեկտորատի գործունեությունը	8
7.	ԱԲՀ-ի Գիտական խորհրդին կից գործող Որակի ապահովման հանձնաժողով	9
8.	Որակի ներքին ապահովման համակարգ	10
9.	Գիտական մաս	15
10.	Ուսումնական մասի գործունեություն	17
11.	Ֆակուլտետների գործունեություն	22
12.	Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին	29
13.	Արտաքին կապերի բաժին	32
14.	Գիտաբժշկական ուսումնական կենտրոն	37
15.	Գրադարան	39
16.	ԱԲՀ կայքէջ	40
17.	Ուսանողական խորհրդի գործունեություն	41
18.	Ուսանողական գիտական ընկերություն	44
19.	Տնտեսական մաս	47
20.	Ամփոփում	48

1.ՆԱԽԱԲԱՆ

Ավանդական բժշկության համալսարանն (այսուհետ՝ ԱԲՀ կամ Համալսարան) առաջնորդվելով ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության դրույթներով, համալսարանի կանոնադրությամբ, 2020-2025թթ. գործող ռազմավարական զարգացման ծրագրով, կառավարման և գիտական խորհուրդների, ռեկտորատի որոշումներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է կրթության որակի ապահովմանն ուղղված տարաբնույթ գործընթացներ:

Ուսումնական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացներում ԱԲՀ-ն առանձնահատուկ կարևորել է բարձրագույն կրթության ոլորտի նորագույն մարտահրավերները և դրանց արձագանքելու, շահառուների կարիքները լավագույնս բավարարելու, կրթության որակը և արդյունավետությունը էապես բարձրացնելու անհրաժեշտությունը:

2022-2023 ուստարվա ընթացքում ԱԲՀ-ն հետևողականորեն շարունակել է իր գործունեությունը մրցունակ մասնագետների պատրաստման, ՄԿԾ-երի բարելավման, համալսարանի միջազգայնացման, կառավարման գործընթացների կանոնակարգման, ֆինանսական կայունության ապահովման և այլ ուղղություններով:

Համալսարանի որդեգրած ուսանողակենտրոն սկզբունքը շարունակվել է գերակա լինել հատկապես ուսանողների հետ տարվող աշխատանքներում:

Ստորև նկարագրված են ԱԲՀ-ի կողմից 2022-2023 ուստարում իրականացված աշխատանքներն՝ ըստ գործունեության տարբեր ոլորտների:

ԹՎԵՐ՝ 2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

ԱԲՀ՝ 32, հիմնադրվել է 1991թ.

Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագիր՝ 2

Բուժական ֆակուլտետ՝ 469 ուսանող

Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ 94 ուսանող

Ուսանողներ՝ 563

Օտարերկրյա ուսանողներ՝ 528

Շրջանավարտներ՝ 117

Համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր՝ 22

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

№	Անուն, Ազգանուն	Պաշտոն
1.	Սարիբեկյան Նորիկ	Ռեկտոր /կ.գ.թ.
2.	Գյոզալյան Արայիկ	ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտոր
3.	Կարապետյան Անահիտ	Դեկան
4.	Գրիգորյան Վահան	Գիտական մասի վարիչ/բ.գ.թ.
5.	Սարգսյան Ասյա	Ուսումնական մասի վարիչ
6.	Հովսեփյան Մանուշակ	ՈԱ բաժնի առաջատար մասնագետ
7.	Սարգսյան Անի	Արտաքին կապերի բաժնի վարիչ
8.	Թարջումանյան Նվարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժ. վարիչ
9.	Ավոյան Սուսաննա	Գլխավոր հաշվապահ
10.	Խեչումյան Սիմոն	Քաղ. պաշտպ. շտաբի պետ
11.	Մանաշյան Գոհար	Դեկանի օգնական
12.	Կիրակոսյան Գոհար	Ուսումնական մասի վարիչի օգնական
13.	Դանիելյան Նաիրա	Ուսումնական մասի վարիչի օգնական
14.	Գաբրիելյան Վարդ	ՄՌԿ և ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ
15.	Հարությունյան Լուսինե	Գանձապահ-հաշվապահ
16.	Ավետյան Աննա	Գրադարանավար
17.	Վարդանյան Լիաննա	Արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետ
18.	Հեղինե Գյուլնազարյան	Արտաքին կապերի բաժնի մասնագետ

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉՆԵՐ

№	Ամբիոն	Ազգանուն, անուն	Գիտական աստիճան, կոչում
1	Հումանիտար առարկաների	Կարապետյան Տաթևիկ	բանաս. գ.թ.
2	Բնագիտական առարկաների	Ջավրուշյան Հայարփի	կ.գ.թ.
3	Բժշկակենսաբանական առարկաների	Հունանյան Նաիրա	կ.գ.թ.
4	Սոցիալական բժշկության	Օվչյան Աննա	հ.գ.թ.
5	Թերապևտիկ առարկաների	Նազլուխանյան Մարո	բ.գ.թ.
6	Վիրաբուժական առարկաների №1	Ավագյան Էդիկ	բ.գ.թ.
7	Վիրաբուժական առարկաների №2	Մանվելյան Ռաֆաել	բ.գ.թ.
8	Ստոմատոլոգիայի	Հակոբյան Հովնան	բ.գ.թ.

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ավանդական բժշկության համալսարանն իրականացնում է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրեր՝ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտություններով.

Դասիչ	Ուսուցման ձևը	Ուսուցման տևողությունը	Ուսուցման լեզուն	Որակավորում	Սահմանային տեղեր
Բուժական գործ 091101.00.7	Առկա	6	Հայերեն և անգլերեն	բժիշկ	120
Ստոմատոլոգիա 091201.00.7	Առկա	5	Հայերեն և անգլերեն	բժիշկ-ստոմատոլոգ	120

Համալսարանում ուսուցումն իրականացվում է միայն առկա համակարգով 2 ֆակուլտետներում՝ «Բուժական» և «Ստոմատոլոգիական»: 2022 թվականի ընդունելությունն իրականացվել է համաձայն լիցենզիայով սահմանված տեղերի, մասնավորապես.

- «Բուժական գործ» մասնագիտությամբ՝ 98 ուսանող
- «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ՝ 13 ուսանող:

Ըստ տարիների համեմատական պատկերը.



Համեմատած նախորդ տարիների ընդունելության տվյալների, հաշվետու տարում «Բուժական գործ» մասնագիտության դիմորդների թիվն ավելացել է, իսկ «Ստոմատոլոգիա» մասնագիտության դիմորդների թիվը մեկով պակասել է: Ամփոփելով ընդունելության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ համեմատած 2021-2022 ուստարվա հետ՝ 2022-2023 ուստարում առաջին կուրս ընդունվող ուսանողների թիվն ավելացել է **15**-ով: 2022-2023 ուստարում Համալսարանում ՀՀ քաղաքացիների ընդունելություն ևս չի կազմակերպվել՝ դիմորդների ոչ բավարար թվով պայմանավորված:

4. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Նախագահ	Կ.գ.թ., ռեկտոր Սարիբեկյան Ն.Խ.
Գիտական քարտուղար	Գիտական մասի վարիչ, Գրիգորյան Վ.Ս.
Անդամներ	
Գյոզալյան Ա.Գ.	Մ.գ.թ., դոցենտ, ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր
Թարջումանյան Ն.Վ.	ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ
Կարապետյան Ա.Ն.	Դեկան
Սարգսյան Ա.Հ.	Ուսումնական մասի վարիչ
Սարգսյան Ա.Ա.	Արտաքին կապերի բաժնի վարիչ
Մինասյան Ա. Լ.	Բ.գ.դ., պրոֆեսոր, ուս. աշխատանքների գծով պրոռեկտոր
Սիմոնյան Տ.Վ.	Բանաս.գիտ.թ., «Հումանիտար առարկաների» ամբիոնի վարիչ
Ջավրուշյան Հ.Գ.	Կ.գ.թ., «Բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչ
Հունանյան Ն.Գ.	Կ.գ.թ., «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի վարիչ
Նազլուխանյան Մ.Ա.	Բ.գ.թ. «Թերապևտիկ առարկաների» ամբիոնի վարիչ
Ավագյան Է.Ս.	Բ.գ.թ. «Վիրաբուժական առարկաների N 1» ամբիոնի վարիչ
Մանվելյան Ռ.Լ.	Բ.գ.դ.պրոֆեսոր «Վիրաբուժական առարկաների N 2» ամբիոնի վարիչ
Մինասյան Է. Մ.	Բ.գ.թ., «Է.Մինասյանի անվան ավանդական բժշկության» ամբիոնի վարիչ
Օվչյան Ա.Ա.	Հոգ.գ.թ., «Սոցիալական բժշկության» ամբիոնի վարիչ
Հակոբյան Հ.Հ	Բ.գ.թ., «Ստոմատոլոգիայի» ամբիոնի վարիչ
Վարդանյան Վ. Յ.	ԳԲՈՒԿ-ի գլխավոր բժիշկ
Ավոյան Ս.Հ.	Գլխավոր հաշվապահ
Աղայի Է.	ՈՒԽ նախագահ, ստոմ 3-րդ կուրսի ուսանող
Ալ-Բայաթի Զ.	ՈՒԳԸ նախագահ, բուժ. ֆակ. 6-րդ կուրսի ուսանող
Զադբուկե Ռ.Պ.	Բուժ. ֆակ. 5-րդ կուրս
Կարապետյան Է.	Ստոմ. ֆակ. 2-րդ կուրս
Վարդանյան Կ.Ե.	Հոգ.գ.դ., պրոֆեսոր, արտաքին շահակից

5. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի գիտական խորհուրդը համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական գործունեությունը պլանավորող, համակարգող կոլեգիալ մարմին է, որը 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում գումարել է 14 նիստ: Գիտական խորհրդի նիստերի նախապատրաստումը, արձանագրությունների վարումը, շահագիգիռ կողմերին որոշումներին ծանոթացնելն իրականացնում է Գիտական մասի վարիչը, որը միևնույն ժամանակ Գիտական խորհրդի քարտուղարն է:

Համառոտ ներկայացնենք Գիտական խորհրդի գործունեությունը՝

- Հաստատվել են Կառավարման խորհրդի, Գիտական խորհրդի, ռեկտորատի, ինչպես նաև հաձնաժողովների կազմերը:
- Լսվել և քննարկվել է համալսարանի ինստիտուցիոնալ հավատագրման փորձագիտական խմբի կողմից ներկայացված թերությունների վերացման պլան-ժամանակացույցով կատարված աշխատանքների կատարողականը:
- Քննարկվել և հաստատվել են կազմակերպչական, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման վերաբերյալ անհրաժեշտ իրավանորմատիվային փաստաթղթերի փաթեթները:
- Հաստատվել են 2022-2023 ուստարվա գործող կրթական ծրագրերի ուսումնական պլանները:
- Քննարկվել են ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները:
- Լսվել են ամբիոնների վարիչների, ստորաբաժանումների և հանձնաժողովների ղեկավարների ըստ պլանի կատարողականները:
- Հաստատվել է համալսարանի 2022-2023 ուսումնական տարվա անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի մասնագիտությունների ընդունելության քննությունների արդյունքները:
- Գիտական խորհրդի նիստերում քննարկված հարցերի շուրջ կայացվել են համապատասխան որոշումներ:

6. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համալսարանի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը գործում է իր կանոնակարգի համաձայն: Համալսարանի Կառավարման խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ռեկտորատը քննարկում, երաշխավորում և իր լիազորությունների սահմաններում որոշումներ է կայացնում Համալսարանում ուսումնական գործընթացներին առնչվող հարցերի վերաբերյալ:

Համալսարանի ռեկտորատը 2022-2023 ուստարվա ընթացքում գումարել է 40 նիստ:

1. Քննարկվել և հաստատվել է ռեկտորատի 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանը:

2. Լսվել է 2022-2023 ուստարվա ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման աշխատանքների մասին:
3. Հրավիրված նիստերին քննարկվել են ուսանողների հեռացման, ազատման և վերականգման հարցերը:
4. Լսվել են նախորդ ուստարվա ամառային քննաշրջանի լուծարքների կազմակերպման և անցկացման մասին հարցեր:
5. Քննարկվել են 2022-2023 ուստարվա ամառային քննաշրջանի արդյունքները:
6. Լսվել են ուսանողներին կուրսից կուրս տեղափոխելու վերաբերյալ հարցեր և այլն:

7. ԱԲՀ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱԲՀ-ի գիտական խորհրդին կից գործող Որակի ապահովման հանձնաժողովը հաշվետու տարում նախապատրաստական աշխատանքներ է տարել ինստիտուցիոնալ վերահավատարմագրման փորձագիտական զեկույցի պատշաճ կազմման նպատակով:

Առաջին հերթին ապահովել է ԱԲՀ-ի 2020-2025 թթ. ՌԶԾ-ին համապատասխան գործունեության իրականացումը. հետևել է ստորաբաժանումների աշխատանքային պլանների, դրանց համապատասխան հաշվետությունների կազմմանը, ՈԱ գործընթացների համակարգված իրականացմանը:

Հաշվետու ուստարում վերանայվել է Որակի ներքին ապահովման քաղաքականությունը, որը գործում էր 2018 թվականից: Ինչպես փորձագետներն էին արձանագրել Ինստիտուցիոնալ հավատարմագրման զեկույցում, ԱԲՀ-ի բոլոր գործընթացներում ՈԱ քաղաքականությունն ուներ համակարգված ինստիտուցիոնալ մոտեցման կարիք:

Վերանայվել է նաև ԱԲՀ ՈԱ ձեռնարկը, որի ստեղծումը և հետևողական կիրառումը ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպման և կառավարման պահանջներից է: ԱԲՀ-ն իր Որակի ապահովման ձեռնարկում, որը կազմվել է 2018-ին, նկարագրում է Որակի ապահովման գործընթացները: Ձեռնարկը ներառում է կազմակերպական գծապատկերը, որը ցուցադրում է որակի ապահովման պատասխանատվությունների բաշխումը, ինչպես նաև տեղեկատվություն որակի ապահովման քաղաքականության, գործընթացների և ընթացակարգերի մասին:

ՈԱՀ-ը հաշվետու տարում նաև համակարգել է ինքնավերլուծության զեկույցի պատրաստման աշխատանքները, կազմակերպել հանդիպում ինքնավերլուծության աշխատանքային խմբի և համալսարանի աշխատակիցների հետ, քննարկել ԱԲՀ ինքնավերլուծության զեկույցի նախնական տարբերակը:

ՈԱ հանձնաժողովի նախագահի առաջարկով ՈԱ հանձնաժողովի կազմը կարելի է ընդլայնել՝ հաշվի առնելով ընթացիկ աշխատանքների ծավալը:

8. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համալսարանի կրթության ներքին որակի ապահովման համակարգը կանոնակարգված է, սահմանված են պատասխանատուների պարտականություններն ու իրավասությունները:

Հաշվետու ուստարում համալսարանում իրականացվել են ինստիտուցիոնալ վերահավատարմագրման գործընթացի նախապատրաստման, ինքնավերլուծության զեկույցի կազմման աշխատանքներ:

ԱԲՀ-ն ինստիտուցիոնալ վերահավատարմագրման հայտ է ներկայացրել Որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ) հիմնադրամ, ինքնավերլուծության զեկույցը ընդունվել է ՈԱԱԿ-ի կողմից, կողմերի միջև կնքված պայմանագրի համաձայն Համալսարանին ներկայացվել է փորձագիտական այցի ժամանակացույցը (28.11.2023-01.12.2023թթ.):

Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունն իրականացնելու համար ռեկտորի հրամանով 20.02.2023թ-ին ձևավորվել է հավատարմագրման 10 չափանիշների ինքնավերլուծության պատրաստման աշխատանքային խումբ, որտեղ ներգրավվել են ստորաբաժանումների աշխատակիցներ և ուսանողներ: Աշխատանքների ընթացքը և ամփոփումը համակարգվել են ռեկտորի, ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի, ՈԱ առաջատար մասնագետի կողմից:

Կառավարում և վարչարարություն: Հաշվետու ուստարում շարունակվել է համալսարանի կառավարման գործընթացին ՊԴ կազմի և ուսանողների մասնակցության գործընթացը: Կառավարման գործընթացներին ուսանողների մասնակցության անուղղակի ձևերից դիտարկվող ժամանակահատվածում կիրառվել են ուսանողական հարցումները, համալսարանի ղեկավարության տարբեր ներկայացուցիչների հետ պարբերաբար հանդիպումները:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը մասնակցել գիտական խորհրդի բոլոր նիստերին՝ որպես խորհրդի անդամ, երբեմն նաև՝ կառավարման խորհրդի նիստերին՝ որպես հրավիրված անձ, հանդես է եկել զեկույցներով, առաջարկություններով:

ԱԲՀ փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարման միասնական էլեկտրոնային համակարգի կատարելագործման աշխատանքները շարունակվել են նաև այս ուսումնական տարում:

Հավելենք, որ ԱԲՀ-ն իրականացնում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն պաշտոնական էլ. հասցեի՝ info@utm.am-ի միջոցով, ներքին շրջանառությունը՝ Sharing թղթապանակի, աշխատակիցների էլ. հասցեների օգնությամբ, Mail/Agent.ru հավելվածի միջոցով:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը ընթացիկ ուստարում պատասխանել է 61 մտից գրություններ, որոնք մակագրվել են նրան ԱԲՀ ռեկտորի կողմից:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը նաև մասնակցել է ԿԳՄՍՆ-ի, ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված հանդիպումներին՝ նվիրված ուսումնական գործընթացի և ներբուհական հարցերի կարգավորմանն ուղղված աշխատանքների բարելավմանը:

2022թ. նոյեմբերին ԱԲՀ-ն ՀՀ ԿԳՄՍՆ ԾԻԳ-ի կողմից հայտարարված Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) շրջանակում առաջարկվող ծրագրին

մասնակցելու նպատակով անցել է ֆինանսական կառավարման և ներքին վերահսկողության համակարգի աուդիտ, որը ծրագրին մասնակցելու պարտադիր պայման էր:

Հավելենք նաև, որ ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի անմիջական մասնակցությամբ մշակվել է ևս մեկ ծրագիր, որը ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից առաջարկվող դրամաշնորհային աջակցության ծրագրին: Հաշվի է առնվել աշխարհում բնապահպանական, կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականությանն աջակցելուն ուղղված քայլերը, ինչպես նաև ԱԲՀ-ի 2020-2025 թթ. ՌԶԾ-ի նպատակ 3-ից («Համալսարանում ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող որակյալ ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ») բխող խնդիրները (3.1-ը՝ «Համալրել համալսարանի ռեսուրսային բազան և ենթակառուցվածքները», խնդիր 3.3-ը՝ «Ավելացնել ֆինանսական ներհոսքը՝ որոնել ֆինանսական նոր միջոցներ և իրականացնել դրանց հավասարակշռված և նպատակային կառավարում»): Առայժմ որևէ արձագանք չենք ստացել ներկայացված ծրագրի վերաբերյալ:

2023թ. գարնանը ԱԲՀ-ն իր կրթական ծրագրերը ներկայացրել է Հայաստանում «Կրթություն և կարիերա 2023 էքսպո» ցուցահանդեսին, որին մասնակցել են մեծ թվով շահառուներ և գործընկերներ: ՈԱ մասնագետները նույնպես իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել այդ գործընթացում:

Կրթական գործունեություն: Հաշվետու ժամանակահատվածում ԱԲՀ-ի ղեկավարությունը ՈԱԱԿ-ի առաջարկով ապահովել է իր 3 դասախոսների մասնակցությունը «Կրթական ծրագրերի համահնչեցումը WFME (Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիա) չափորոշիչներին» թեմայով եռօրյա վերապատրաստմանը: Այնուհետև համալսարանում կազմակերպվել է հանդիպում դասախոսների հետ, որտեղ վերապատրաստման մասնակիցները ներկայացրել են ձեռքբերված գիտելիքները:

Համալսարանում կրթական միջավայրի բարելավման նպատակով պարբերաբար ուսում-նասիրվել են ուսանողների կրթական կարիքները. իրականացվել են սոցիոլոգիական հարցումներ (պրակտիկայից ուսանողների բավարարվածության հարցում, շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցում) հանդիպումներ ուսանողների հետ, տեղեկատվության տրամադրման և ուղղորդման աշխատանքներ ուսանողական խորհրդի հետ:

Ենթակառուցվածքներ և ֆինանսական ռեսուրսներ: Վերջին երեք տարիների ընթացքում ուսանողների շրջանում անցկացված հարցումների միջոցով հնարավոր է եղել տեղեկատվություն ստանալ ուսումնական ռեսուրսներով ապահովվածության, արդյունա-վետության, նյութատեխնիկական բազայի վիճակի, գնահատման գործող համակարգի նպատակահարմարության, կրթական ծրագրերի ու դասավանդման արդյունավետության, շրջանավարտների՝ կրթական գործընթացից բավարարվածության և այլնի վերաբերյալ: Համալսարանն անցած տարիների ընթացքում զգալի ֆինանսական միջոցներ է հատկացրել սարքավորումների, տեխնիկայի, գույքի, հիմնական միջոցների ձեռքբերման համար:

Ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերը կատարվում են բացառապես համալսարանի ռազմավարությանը համապատասխան: Ծախսերի պլանավորումը կատարվել է նպատակների և հնարավորությունների իրականացման տեսանկյունից:

ԱԲՀ-ում գործող հարցումների անցկացման կանոնակարգի համաձայն առցանց հարցում է անցկացվել համալսարանի 2-6–րդ կուրսերի ուսանողների շրջանում ուսումնական գործընթացում ներդրված ռեսուրսների և համալսարանի կողմից տրամադրվող ծառայություններից բավարարվածության վերաբերյալ, որը վերլուծվել է ՈԱ առաջատար մասնագետի կողմից և արդյունքները ներկայացվել են ստորաբաժանումներին արդեն 2022-2023 ուստարվա սկզբին: Հարցմանը մասնակցել են սովորողների 51 տոկոսը: Հարցման արդյունքներից պարզ էր հետևյալը՝

- ուսանողների զգալի մասը, ընդհանուր առմամբ, գոհ է համալսարանում առկա ռեսուրսներից, սակայն առկա է համալսարանի գրադարանում մասնագիտական գրականության վերանայման և առարկայական ծրագրերին համապատասխանության խնդիր,
- անհրաժեշտություն կա լսարաններում, լաբորատորիայում որոշ նյութատեխնիկական բարելավումների իրականացման,
- հարցվածների մեծամասնությունը բավարարված է տեղեկատվության տրամադրումից (իրենց իրավունքների և պարտականությունների, գնահատման համակարգի, ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ),
- ԱԲՀ-ի ուսումնական ծրագրերին վերաբերող հիմնական տեղեկատվությունը և փաստաթղթերը հասանելի են անգլերենով և տեղադրված են ԱԲՀ-ի պաշտոնական կայքում: Հարցվածների մեծամասնությունը բավարարված է ԱԲՀ-ի պաշտոնական կայքից, Ֆեյսբուք սոցիալական էջից նույնպես, սակայն կա կայքի նկատմամբ ուսանողների հետաքրքրությունը մեծացնելու անհրաժեշտություն:

Վերհանվել են խնդիրներ, ներկայացվել առաջարկներ, որոնք քննարկվել են ստորաբաժանումներում և ԳԽ-ում, ընդունվել է համապատասխան որոշում բարելավման միջոցառումների իրականացման համար:

Ուսումնասիրությունների արդյունքները տեղադրվել են Համալսարանի կայքի՝ «Որակի ապահովման համակարգ» էջում:

Ուսանողակենտրոն քաղաքականություն: ԱԲՀ-ի կառավարման գործընթացում ուսանողներն ունեն իրենց կայուն տեղն ու դիրքը: Համալսարանում ուսանողների իրազեկվածության ապահովումը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կրում է պարտադիր և շարունակական բնույթ: Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ուսանողների հետ, ինչպես անհատական, այնպես էլ խմբային:

Վերահսկվել է «Կրեդիտային համակարգ» էլեկտրոնային ներքին ծրագրի պատշաճ կիրառումը՝ ապահովելով օբյեկտիվ և թափանցիկ գործընթաց:

Արտաքին կապեր և միջազգայնացում: Համաձայն ԱԲՀ-ի գործող 2020-2025թթ. ՌԶԾ-ի՝ համալսարանն ակտիվ աշխատանքներ է տանում միջազգայնացման և օտարազգի պոտենցիալ դիմորդների հավաքագրման ուղղությամբ: Հաշվետու տարում՝ ԱՄԷ Շարժայի «Սըքսես Փոինթ» քոլեջի հետ գործող համագործակցության պայմանագրի շրջանակում, ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը, ՈԱ առաջատար մասնագետը, դեկանի, արտաքին կապերի բաժնի վարիչի, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչի, ուսումնական մասի վարիչի հետ միասին անմիջական մասնակցություն են ունեցել դիմորդների հավաքագրման աշխատանքներին:

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի առաջարկով և խորհրդատվությամբ Արտաքին կապերի բաժինն իր վերջին 3 տարվա գործունեության արդյունավետության գնահատման նպատակով վերլուծել է տարեկան հաշվետվությունները՝ ԱԲՀ ՌԶԾ-ին և բաժնի աշխատանքային պլանին համապատասխանության տեսանկյունից: Ամփոփելով ԱԲՀ-ի Արտաքին կապերի բաժնի կողմից ըստ տարիների պլանավորված և իրականացրած աշխատանքները, կարող ենք փաստել, որ Արտաքին կապերի բաժինը գործել է ԱԲՀ ռազմավարությանը համապատասխան, ընդլայնել և ամրապնդել է համագործակցությունը կնքված պայմանագրերի, հուշագրերի շրջանակում:

Արդիական հետազոտություններ և նորարարություն: Հաշվետու տարում ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորն ակտիվ քայլեր է ձեռնարկել դրամաշնորհային հետազոտական ծրագրերում ընդգրկվելու ուղղությամբ, որը ԱԲՀ 2020-2025 թթ. ՌԶԾ-ի խնդիրներից է:

Որակի ապահովման ներքին համակարգ: Համալսարանը տրամադրում է անհրաժեշտ մարդկային, նյութատեխնիկական ռեսուրսներ ՈԱ գործընթացների իրականացման, որակի մշակույթի կայացման համար: ՈԱ գործընթացների իրականացման համար տրամադրվող մարդկային, ֆինանսական, ժամանակային և նյութատեխնիկական ռեսուրսները հնարավորություն են ընձեռել դիտարկվող ժամանակահատվածում պլանավորել, իրականացնել մի շարք աշխատանքներ և բարելավումներ, մասնավորապես՝ իրականացվել են վերահավատարմագրման գործընթացի նախապատրաստման, ինքնավերլուծության զեկույցի կազմման աշխատանքներ:

ԳԽ-ին կից ՈԱ հանձնաժողովը, որի կազմում են ընդգրկված ԱԲՀ ՈԱ մասնագետները, իրականացրել է ԱԲՀ-ի ՌԶԾ-ի գնահատում՝ ըստ ԳԱՑ-երի:

Հաշվետու տարում աշխատանքային խմբի կողմից վերանայվել է Որակի ներքին ապահովման ձեռնարկը, որում ներառվել են գործող, լրամշակված ՈԱ քաղաքականությունը, ընթացակարգերը, համալսարանի վերանայված առաքելությունը, տեսլականը, ուղենիշներ որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման համար:

Համալսարանում ՈԱ և որակի ներքին մշակույթի ձևավորման գործընթացներում ներգրավված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները: Արտաքին շահակիցների (շրջանավարտները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահներ և անդամներ) կողմից տրվող հաշվետվությունները և արդյունքները հնարավորություն են

տվել տեղեկանալու համալսարանում մատուցված կրթական ծառայությունների որակի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, որակի ապահովման գործընթացներում առավել լայն ընդգրկվածություն են ունեցել ներքին շահակիցները: ՈԱ մասնագետների կողմից կազմակերպվել են մի շարք հանդիպումներ թե՛ ուսանողների, թե՛ պրոֆեսորադասախոսական ու վարչական կազմի հետ: Ուսանողներին ներկայացվել են ՈԱ գործընթացները և ուսանողության ներգրավվածությունը դրանում, ՀՀ քոլեջներից ԱԲՀ 2-րդ կուրս տեղափոխված ուսանողներն իրազեկվել են գործող որոշ կանոնակարգերի մասին:

ԱԲՀ ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը հանդիպում է ունեցել ամբիոնների հետ, քննարկվել են մի շարք հարցեր ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման և անցկացման վերաբերյալ, խոսվել է հատկապես ուսանողներին մասնագիտական գրականությամբ ապահովելու, համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում որակի մշակույթի զարգացմանը միտված որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի մասին, կոնկրետ օրինակներ են բերվել ամբիոնների աշխատանքներում այդ սկզբունքով առաջնորդվելու մասին:

Ամփոփ ներկայացվել է նաև ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի և ՈԱ առաջատար մասնագետի ԱԲՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համագործակցության, որակի շարունակական բարելավմանն ուղղված փաստաթղթերի համալրման և վերանայման աշխատանքները, խոսվել է նաև այս կամ այն գործընթացի գնահատման, բարելավման նպատակով հավաքագրված անհրաժեշտ տեղեկատվության հիման վրա իրականացված վերլուծությունների մասին, որոնք լսվել են ԱԲՀ ԳԽ-ում և ընդունվել համապատասխան որոշումներ:

Հանդիպումներից ևս մեկը նույնպես կազմակերպվել էր ԱԲՀ ստորաբաժանման ղեկավարների հետ ՀՀ-ն Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ իրականացվելիք «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) նոր շրջափուլի մասին տեղեկացնելու նպատակով: Առաջարկվել է ընդգրկվել ծրագրում, որի միջոցով մրցակցային հիմունքներով ՀՀ բուհերին տրամադրվում են դրամաշնորհներ՝ նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացման և բուհերի կարողությունների հզորացման նպատակով:

Հանդիպումներ են կազմակերպվել ԱԲՀ վերահավատարմագրման աշխատանքային խմբի հետ նախապատրաստական աշխատանքների, ինքնավերլուծության զեկույցի պատրաստման աշխատանքների ընթացքի քննարկման նպատակով:

Կազմակերպվել է հանդիպում 2021-2022 ուստարվա պրակտիկայից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքների քննարկման և բարելավման առաջարկների ներկայացման նպատակով: Քննարկման ընթացքում արված առաջարկությունները ներառվել են «Պրակտիկայից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման» վերլուծությունում և ներկայացվել ԳԽ-ի առաջիկա նիստին:

Համալսարանը ձգտում է հնարավորինս ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը ՈՆԱ բոլոր փուլերում՝ սկսած պլանավորում–փաստա-

թղթավորումից մինչև իրականացում, գնահատում և բարելավում, ինչպես նաև գնահատել ներգրավման մեխանիզմների արդյունավետությունը:

9. ԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

Համալսարանում հաշվետու ժամանակահատվածում ուսումնական գործընթացում ներգրավված են եղել 68 մասնագետ, որոնցից 6-ը ունեն դոկտորի գիտական աստիճան, իսկ 20-ը՝ գիտությունների թեկնածուի աստիճան:

Համալսարանի դասախոսական անձնակազմի մասն ուսումնական գործընթացին զուգահեռ զբաղվում է նաև մասնագիտական և գիտական գործունեությամբ: Համալսարանում դասախոսող պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ, հեղինակվել կամ համահեղինակվել են 45 հոդված և գրքի գլուխ, որոնց ընդհանուր թվից 28-ը՝ արտերկրում:

Համալսարանի դասախոսները մասնակցել են տեղական և միջազգային գիտաժողովների, որոնցից մի քանիսում հանդես են եկել զեկույցներով և/կամ տպագրել են հոդված գիտաժողովի ամփոփիչ ձեռնարկներում: Դասախոսներից 15-ն անցել են մասնագիտական վերապատրաստումներ: Համալսարանական դասախոսները հաշվետու ուստարվա ընթացքում ստացել են հետազոտական դրամաշնորհներ:

ԱԲՀ ուսանողները ևս ակտիվ գործունեություն են իրականացրել գիտահետազոտական ոլորտում, նրանցից մի քանիսը տպագրել են գիտական վերլուծական բնույթի հոդվածներ, ունեցել են պանելային զեկույցներ: Զեկույցներից մեկն էլ միջազգային կոնֆերանսին զբաղեցրել է 2-րդ պատվավոր տեղը: Հաշվետու ուստարում 2 ուսանող ընդգրկվել է դրամաշնորհային հետազոտական նախագծերում:

Ստորև գծապատկերներով ներկայացված են հաշվետու տարվա և նախորդ ուստարվա ընթացքում գիտական գործունեության վերաբերյալ համեմատական պատկերով տեղեկատվությունը:

<u>Գծապատկեր № 1</u>

ԱԲՀ-ի դասախոսների գիտական գործունեության համեմատական պատկերը 2021-2022 և 2022-2023 թթ.:



ԱԲՀ-ի դասախոսների գիտական գործունեությունը վերջին 4 տարիների համար

Գծապատկեր № 2



Գծապատկեր №

ԱԲՀ-ի աշխատակիցների ՀՀ և արտերկրում ունեցած գիտական հրապարակումները վերջին 4 տարիների համար և համեմատությունը:



Համեմատելով նախորդ տարիների հետ, հաշվետու ուստարում դասախոսական կազմի կողմից գիտահետազոտական հոդվածների, թեզերի և աշխատությունների հրատարակումների թիվն ավելացել է: Այս ամենին որոշ խթան է հանդիսացել ԱԲՀ-ի Գիտական մասի վարիչի ակտիվ աշխատանքը և ղեկավարության կողմից սահմանված խրախուսման համակարգը:

Հաշվետու տարվա ձեռքբերումներից է եղել ՈՒԳԸ-ի ակտիվացումը: 2022-2023 ուստարվա ընթացքում համալսարանի ուսանողները Գիտական մասի վարիչ Վ.Գրիգորյանի գլխավորությամբ մասնակցել են մի շարք գիտական կոնֆերանսների, որպես համահեղինակներ տպագրել են մի քանի գիտական հոդվածներ: ՈՒԳԸ-ի երկու ուսանողներ ընդգրկվել են դրամաշնորհային ծրագրերում:

10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2022-2023 ուսումնական տարում ևս Ուսումնական մասն իր գործունեությունն իրականացրել է իր կանոնադրության և աշխատանքային պլանի համաձայն՝ համագործակցելով ֆակուլտետների դեկանատի, արտաքին կապերի բաժնի և այլ ստորաբաժանումների հետ:

Ուսումնական մասի կողմից.

- Ժամանակին ամփոփվել և պատրաստվել են ուսանողների՝ ըստ կուրսերի և խմբերի ցուցակները, ուսումնական մատյանները, ամբիոնների դասաբաշխումը, ուսումնական աշխատանքների ծավալը, օրացուցային-թեմատիկ պլանները, խորհրդատվությունների մատյանները և այլ ձևաթղթեր:
- Ժամանակին պատրաստ են եղել երկու ֆակուլտետների 2022-2023 ուստարվա ուսումնական օրացույցները, դասացուցակները, միջանկյալ ստուգումների, տարբերությունների, քննությունների, լուծարքների և պրակտիկաների ժամանակացույցները: Դրանք և թղթային, և էլեկտրոնային տարբերակներով հասանելի են եղել ամբիոններին:
- 2022-2023 ուսումնական տարում վարձակալման պայմանագրեր են կնքվել «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ-ի, ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության, «Հերա Մեդ» ՍՊԸ կլինիկաների հետ: Նշված բազաներից էլ հրավիրվել են նոր դասախոսներ:
- Հաշվետու ուստարում համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ուղարկված գրությունների, համալսարանում կազմակերպվել է 1-ին կուրս ընդունվող օտարերկրյա դիմորդների գիտելիքների ստուգում՝ «Անգլերեն լեզու», «Կենսաբանություն» և «Քիմիա» առարկաներից:
- Ընդհանուր 1-ին կուրս են ընդունվել 111 ուսանող, որից 98-ը Բուժական ֆակուլտետ, իսկ 13-ը՝ Ստոմատոլոգիական: Ընդունելության աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 14%: Դիմորդները մեծ թիվը Հնդկաստանից է, նաև 2022-2023 ուսումնական տարում ունեցել ենք դիմորդներ՝ Հորդանան, Իռլանդիա, Ֆիլիպիններ, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Սիրիա, Իրան երկրներից:
- 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ունեցել ենք այլ բժշկական բուհերից, բժշկական քոլեջներից Բուժական և Ստոմատոլոգիական ֆակուլտետների տարբեր կուրսեր ընդունված կամ տեղափոխված թվով 126 (Բուժական՝ 108, Ստոմատոլոգիական՝ 18) ուսանողներ:
- Բուժական ֆակուլտետի երկրորդ կուրս են տեղափոխվել նաև Դուբայի «Success Point» համալսարանի առաջին կուրսն ավարտած թվով 16 ուսանողներ (15 Հնդկաստանի և 1 Բանգլադեշի քաղաքացիներ), որի հետ ԱԲՀ-ն ունի համագործակցության պայմանագիր: Վերջիններս առարկայական տարբերություններ չեն ունեցել:

2022-2023 ուստարում ունեցել ենք Բուժական և Ստոմատոլոգիական ֆակուլտետներում հայ ուսանողներից ձևավորված II կուրսի 2 խումբ՝ 10 ուսանող Բուժական ֆակուլտետում, 15 ուսանող Ստոմատոլոգիական ֆակուլտետում, որոնք դիմել են ուսումը ԱԲՀ-ում շարու-

նակելու նպատակով և ներկայացրել են միջին բժշկական մասնագիտական համապատասխան դիպլոմներ:

Կիսամյակների սկզբում ճշտվել են Բուժական և Ստոմատոլոգիական ֆակուլտետների բոլոր կուրսերի ուսանողների ցուցակները, կազմվել են ուսումնական խմբերը, ըստ որի ունեցել ենք 33 ուսումնական խումբ, որից 4 խմբում հայ ազգի ուսանողներն են, մնացած խմբերում՝ օտարազգի: Գարնանային կիսամյակում Բուժական ֆակուլտետի 205 խումբը փակվեց և մնաց ընդհանուր 32 խումբ:

Ուսանողների խմբերի ավելացման հետևանքով, հաշվետու ուսումնական տարում, որոշ առարկաների համար հրավիրել ենք նոր դասախոսներ:

- Հաշվետու ուստարվա երկու կիսամյակների ընթացքում բոլոր կուրսերում, համապատասխան կուրսի խորհրդատուի, դեկանի, ուսանողական խորհրդի նախագահի հետ միասին անցկացվել են խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են ֆակուլտետների կուրսերի առաջադիմությունը, հաճախումների վիճակը, կազմակերպչական այլ հարցեր:
- Արտաքին կապերի բաժնի հետ համատեղ կազմակերպվել են շրջանավարտների դիպլոմների և նրանց հավելվածների տպագրման աշխատանքները և շրջանավարտների դիպլոմների բաշխման մատյանի վարումը: Բացարձակ գերազանցությամբ բուհն ավարտել է ‹‹Ստոմատոլոգիա›› մասնագիտության 1 շրջանավարտ, ‹‹Բուժական գործ›› մասնագիտության 1 շրջանավարտ: Սահմանված ժամկետներում դիպլոմները և նրանց հավելվածները հանձնվել են շրջանավարտներին:

2022-2023 ուստարում Համալսարանում գործում են 8 ամբիոններ, որոնք համալրված են համապատասխան դասախոսներով: Տեղեկացնեմ, որ ժամանակավորապես դադարեցվել է Է.Մինասյանի անվան ավանդական ամբիոնի գործունեությունը, և ամբիոնի առարկաները տեղափոխվել են «Թերապևտիկ առարկաների» ամբիոն:

Տարվա կտրվածքով ամբիոնների ընդհանուր առաջադիմությունը կազմել է 80,85%, իսկ որակական առաջադիմությունը՝ 58,9 %: Ընդհանուր առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Վիրաբուժական առարկաների 2» ամբիոնում, իսկ ցածրը՝ «Թերապևտիկ առարկաների» ամբիոնում: Որակական առաջադիմության բարձր տոկոսը գրանցվել է «Վիրաբուժական առարկաների 1» ամբիոնում, իսկ ցածրը՝ «Թերապևտիկ առարկաների» ամբիոնում: Ընդհանուր պատկերը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ № 1

N	Ամբիոն	Աշնանային կիսամյակ		Գարնանային կիսամյակ		Տարեկան առաջ.	
		Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.	Ընդհ. առաջ.	Որակ. առաջ.
1	Հումանիտար առարկաների	90,05	56,12	95,47	57,15	87,08	55,79
2	Բնագիտական առարկաների	80,3	37,25	83,2	38,66	86,25	37,15

3	Բժշկակենսաբանական առարկաների	76,0	45,2	70,6	44,3	75,7	47,2
4	Սոցիալական բժշկության	97	84,19	92	74,15	94,5	79,17
5	Թերապևտիկ առարկաների	86	56	96	64	91	60
6	Վիրաբուժական առարկաների 1	81,9	55,5	97,3	80,9	94,5	74,4
7	Վիրաբուժական առարկաների 2	97,2	87,9	99,3	50,2	98,2	75,8
8	Ստոմատոլոգիայի	90,28	57,46	99,03	66,4	94,65	61,93
ԸՆԴԱՄԵՆԸ		78	60	92	60	90	61

Գծապատկերներ 1-ում և 1.1-ում ներկայացված են Համալսարանի 8 ամբիոնների տարեկան ընդհանուր առաջադիմության համեմատական վերլուծական տվյալները նախորդ տարվա համեմատ:

Գծապատկեր № 1



Գծապատկեր № 1.1



Ըստ գծապատկեր 1-ի և 1.1-ի, որտեղ ներկայացված են 8 ամբիոնների 2 տարվա տարեկան ընդհանուր առաջադիմությունը, ըստ որի՝

Բնագիտական առարկաների և Բժշկակենսաբանական առարկաների ամբիոնները հաշվետու տարում գրանցել են մոտ 10%-ի չափով բարելավում: Թերապևտիկ առարկաների ամբիոնի մոտ ևս նկատվում է զգալի բարելավում՝ նախորդ տարվա համեմատությամբ: Հումանիտար առարկաների և Սոցիալական բժշկության ամբիոններն արձանագրել են առաջադիմության 2-3 % անկում:

Գծապատկերներ 2-ում և 2.1-ում ներկայացված են Համալսարանի 8 ամբիոնների տարեկան որակական առաջադիմության համեմատական վերլուծական տվյալները նախորդ տարվա համեմատ:

Գծապատկեր № 2



Գծապատկեր № 2.1



Ըստ գծապատկեր 2-ի և 2.1-ի, որտեղ ներկայացված է 8 ամբիոնների 2 տարվա տարեկան որակական առաջադիմությունը, պարզ է, որ միայն Թերապևտիկ առարկաների ամբիոնի մոտ, ի տարբերություն 2021-2022 ուստարվա, նկատվում է առաջադիմության զգալի բարելավում՝ մոտ 44 %-ով: Մնացած 7 ամբիոնների մոտ նկատվում է որակական առաջադիմության որոշակի անկում:

Այսպիսով, ըստ ամբիոնների կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունների վերլուծության, հաշվետու ուստարում որակական առաջադիմության նման ցուցանիշը պայմանավորված է 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում ուսանողների մեծ ներհոսքով, որն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի համաձայն՝ Սուրբ Թերեզա բժշկական համալսարանի լուծարմամբ պայմանավորված:

Ամբողջ տարվա ընթացքում վերահսկվել են համալսարանական ամբիոնների ուսումնական պարապմունքներն ու գործունեությունը:

2022-2023 ուսումնական տարում բոլոր 8 ամբիոնների ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է տարվա սկզբին **43767** ժամ:

Կազմակերպել և ստուգվել են 2022-2023 ուստարվա համալսարանի 8 ամբիոնների տարեկան դասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածությունների հաշվարկները, որոնք ամփոփ ներկայացված են աղյուսակ 2-ում:

2022-2023 ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածության կատարողականի ցուցանիշները

Աղյուսակ № 2

Հ/հ	Ամբիոն	Պլան	Կատարողական	Շեղում
1.	Հումանիտար առարկաների	2572	2440	-132
2.	Բնագիտական առարկաների	3045	2713	-332
3.	Բժշկակենսաբանական առարկաների	7824	6853	-971
4.	Թերապևտիկ առարկաների	8198	7808	-390
5.	Վիրաբուժական առարկաների թիվ 1	3574	3325	-249
6.	Վիրաբուժական առարկաների թիվ 2	4131	3385	-746
7.	Սոցիալական բժշկության	2951	2655	-296
8.	Ստոմատոլոգիայի	4327	3847	-480
Ընդամենը		**36622**	**33026**	**-3596**

2022-2023 ուստարում 8 ամբիոնների ուսումնական ընդհանուր ծանրաբեռնվածությունը ըստ պլանի կազմել է 36622 ժամ, տարեվերջում, ըստ ներկայացված կատարողականների կատարվել է՝ 33026 ժամը: Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում չի կատարվել 3596 ժամ բեռնվածություն:

Ի տարբերություն նախորդ՝ 2021-2022 ուստարվա, 8 ամբիոնների ուսումնական ընդհանուր ծանրաբեռնվածությունը ըստ պլանի կազմել է 21149 ժամ, ըստ ներկայացված կատարողականների կատարվել է՝ 20750 ժամ: Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում չի կատարվել 791 ժամ բեռնվածություն:

Նման զգալի տարբերությունը պայմանավորված է ուսումնական խմբերի ավելացմամբ, որի պատճառով էլ ավելացել է նաև ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունը: Ինչ վերաբերում է հաշվետու ուստարվա ընթացքում 3596 ժամ բեռնվածություն շեղումները, ապա դրանք պայմանավորված են հետևյալ պատճառներով.

- տոնական օրերի առկայություն,
- խորհրդատվություններին հատկացված ոչ բոլոր ժամերի կատարում,
- բուժական ֆակուլտետում II կուրսում մեկ ուսումնական խմբի փակման հետ:

Ուսումնական մասը տարվա ընթացքում մասնակցել է ամբիոնների, ռեկտորատի, գիտ. խորհրդի նիստերին, դասալսումներին:

Այսպիսով, ամփոփելով ուսումնական մասի 2022-2023 ուստարվա կատարողականը, կարելի է փաստել, որ սահմանված ժամկետներում ամբողջությամբ և անթերի կատարվել են բոլոր պլանավորված գործողությունները, համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպվել է գործող ուսումնական պլաններով ճշգրտված ծանրաբեռնվածությունների, առարկայական ծրագրերի բովանդակությանը և օրացուցային պլաններին համապատասխան: Հաշվետու տարում մասնակի ավելացել է նաև ուսումնական մասի աշխատանքային ծավալը, որը կապված է եղել ուսանողների ներհոսքով, ուսումնական խմբերի և դասախոսների թվի ավելացմամբ: Ուսումնական խմբերի ավելացման պատճառով կլինիկական առարկաների գործնական պարապմունքները ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ համալրվել է նաև դասախոսական կազմը: Հաշվետու ուստարում ձևավորվել են նաև II կուրսում հայկական խմբեր:

11. ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ավանդական բժշկության համալսարանը 2022-2023 ուսումնական տարում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների գծով պատրաստել է բժշկական կադրեր՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով:

2022-2023 ուստարում համալսարանում սովորել են և' հայազգի, և' օտարազգի ուսանողներ: Համալսարանում դասավանդումն իրականացվել է հայերենով և անգլերենով:

Ի տարբերություն նախորդ տարիների, հաշվետու տարում ավելացել է համալսարանում հայազգի սովորողների թվաքանակը, որը պայմանավորված է բժշկական քոլեջներից բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթությունը շարունակելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի 12.05.2022թ. № 05/11.2/10656-2022 գրությամբ: 2022-2023 ուստարում թվով 25 դիմորդներ ընդունվեցին ԱԲՀ՝ ուսումը շարունակելու «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների երկրորդ կուրսում:

Հաշվետու ուստարում ավելացել է նաև համալսարանում օտարերկրյա սովորողների թվաքանակը: 2022-2023 ուստարում ևս ընդլայնվել է Համալսարանի ուսանողների աշխարհագրական շրջանակը:

Այսպիսով, հաշվետու ուսումնական տարում համալսարանում սովորել են ուսանողներ Հայաստանից, Հնդկաստանից, Իրաքից, Իրանից, Գերմանիայից, Իռլանդիայից, Մեծ Բրիտանիայից, Հորդանանից, Շվեդիայից, Ուկրաինայից, Շրի Լանկայից, Ֆիլիպիններից, հաշվետու տարում նաև՝ Վանուատեից, Գանայից, Եգիպտոսից, Սիրայից, Իտալիայից:

Ինչպես նախորդ տարիներին, 2022-2023 ուստարում ևս, ցավոք, հայ ուսանողների ընդունելություն առաջին կուրսերում չենք ունեցել:

2022-2023 ուստարվա «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով տարեսկզբին սովորել են թվով 618 (նախորդ ուստարի՝ 400), իսկ տարեվերջին՝ 578 (նախորդ ուստարի՝ 530) ուսանող (119 ավարտած):

Գծապատկեր № 1



Գծապատկեր № 2



Գծապատկեր № 3

ԱԲՀ-ում սովորող ուսանողների ընդհանուր թիվը



Գծապատկեր № 4

Ուսանողների համեմատական տվյալները 2021-2022 և 2022-2023 ուստարվա համար



Գծապատկեր № 5



Հաշվետու տարում ժամանակին կազմվել, ռեկտորատում հաստատվել են և սոցիալական տարբեր հարթակներով /էլեկտրոնային տարբերակով և ֆեսբուքյան համալսարանական էջով, ինչպես նաև համալսարանի համապատասխան ցուցանակում տեղադրվելով շահակիցներին հասանելի են եղել են երկու ֆակուլտետների ուսումնական տարվա ուսումնական օրացույցները, աշնանային և գարնանային կիսամյակների դասացուցակները, միջանկյալ ստուգումների, քննաշրջանների, լուծարքների, ուսումնաարտադրական պրակտիկաների, ակադեմիական տարբերությունների հանձնման ժամանակացույցները: 2022-2023 ուսումնական

տարվա ձմեռային և ամառային քննաշրջանների, լուծարքների ժամանակացույցները մինչ ռեկտորոտում հաստատելը, նախապես համաձայնեցվել են ուսանողների հետ:

2022-2023 ուսումնական տարում 2 կիսամյակների ընթացքում կայացել են համալսարանի ամբիոնների նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը տվյալ ամբիոնում, վերլուծվել են ուսանողների առաջադիմության արդյունքները, լուծարքների արդյունքները, վերհանվել են որոշ խնդիրներ՝ կապված ուսումնաարտադրական պրակտիկայի, գնահատման համակարգի, ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների բարելավման և այլ հարցերի հետ:

2022-2023 ուսումնական տարում պատշաճ կերպով ամբիոններում կազմակերպվել են առարկայական խորհրդատվություններ:

Հաշվետու տարում դեկանի, Արտաքին կապերի բաժնի մասնագետների և կուրսերի խորհրդատուների կողմից բազմիցս կազմակերպվել են անհատական հանդիպում-զրույցներ ցածր առաջադիմություն ունեցող, բացակայող ուսանողների հետ, նաև՝ ուսանողների միջև միջանձնային հարաբերությունների, դասախոս-ուսանող հարաբերությունների, ուսման վարձի, առողջական խնդիրների և այլ հարցերի հետ կապված:

Հաշվետու ուստարվա երկու կիսամյակների ընթացքում, համապատասխան կուրսի խորհրդատուի, ուսումնական մասի վարիչի, ուսանողական խորհրդի նախագահի հետ միասին բոլոր կուրսերում անցկացվել են խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են ուսանողների հաճախելիությունը, ֆակուլտետների առաջադիմությունը՝ ըստ կուրսերի:

- Կազմակերպվել են 2022-2023 ուստարվա ձմեռային և ամառային քննաշրջանները, լուծարքները և վերահսկվել են դրանց ընթացքը:
- 2022-2023 ուսումնական տարվա երկու քննաշրջանների ընթացքում ըստ կուրսերի և խմբերի քանակի ձմեռային քննաշրջանում կազմակերպվել են և անցկացվել 185 ստուգարք (130 բուժ./55 ստոմ.) և 92 (69 բուժ./23 ստոմ.) քննություն, ամառային քննաշրջանում՝ 157 ստուգարք (95 բուժ. /62 ստոմ.) և 125 քննություն (96 բուժ./29 ստոմ.) /աղյուսակ 1/:

Աղյուսակ № 1

2022-2023 ուստարի

«Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների
ստուգարքների և քննությունների քանակը

Ֆակուլտետ	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան		Տարեկան	
	Ստուգ.	Քննութ.	Ստուգ.	Քննութ.	Ստուգ.	Քննութ.
Բուժական	130	69	95	96	125	165
Ստոմատոլ.	55	23	62	29	117	52
Ընդամենը	**185**	**92**	**157**	**125**	**242**	**217**

- *Ստուգարքների և քննությունների քանակը հաշվարկած է ըստ առկա խմբերի քանակի*

Հաշվետու տարում գիտխորհրդին են ներկայացվել ձմեռային և ամառային քննաշրջանների հետ կապված առաջադիմության և լուծարքների արդյունքները:

- 2022-2023 ուսումնական տարում «Բուժական» ֆակուլտետում ձմեռային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 83.0 %, իսկ որակականը՝ 58.0 %:
- Ձմեռային քննաշրջանում ակադեմիական պարտքերի քանակը «Բուժական» ֆակուլտետում կազմել է 690 (անբավարար՝ 339 և չներկայացած՝ 351), որից լուծարքների ժամանակ մարվել են 395-ը:
- 2022-2023 ուսումնական տարում «Բուժական» ֆակուլտետում ամառային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 88,3 %, իսկ որակականը՝ 61,0 %:

Ակադեմիական պարտքերի քանակն ամառային քննաշրջանում կազմել է 355 (անբավարար՝ 190, չներկայացած՝ 165), որից լուծարքների ժամանակ մարվել է 124-ը, 231-ը չի մարվել:

Աղյուսակ № 2

ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ձմեռային և ամառային քննաշրջանների առաջադիմություն (2022-2023 ուստարի)

Կուրս, խումբ	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան		Տարեկան առաջադիմություն	
	Ընդ.առաջ. %	Որակ.առաջ. %	Ընդ.առաջ. %	Որակ.առաջ. %	Ընդ.առաջ. %	Որակ.առաջ. %
101	*95,1*	*74.6*	*91,6*	*76,0*	*93,4*	*75,3*
102	*88,9*	*55,0*	*85,4*	*60,0*	*87,2*	*57,5*
103	*90,3*	*45,0*	*81,5*	*47,7*	*86,0*	*46,4*
104	*72,5*	*37,0*	*65,0*	*36,0*	*69,0*	*36,5*
I	**86,7 %**	**52,9 %**	**81,0 %**	**55,0 %**	**84,0 %**	**54,0 %**
201	*77,6*	*55,0*	*79,2*	*61,0*	*78,4*	*58,0*
202	*75,5*	*30,5*	*66,2*	*35,6*	*71,0*	*33,0*
203	*67,5*	*27,0*	*69,0*	*32,5*	*67,0*	*30,0*
204	*77,4*	*67,0*	*77,7*	*59,0*	*77,6*	*63,0*
205	*90,5*	*59,0*	*-*	*-*	*90,5*	*59,0*
II	**77,7%**	**47,7 %**	**73,0 %**	**47,0 %**	**77,0 %**	**47,0 %**
301	*72,3*	*51,0*	*84,5*	*58,4*	*78,4*	*55,0*
302	*87,0*	*50,0*	*88,0*	*68,0*	*87,5*	*59,0*
303	*62,5*	*32,0*	*82,0*	*59,4*	*72,3*	*46,0*
III	**73,9 %**	**44,3 %**	**85,0 %**	**62,0 %**	**79,4 %**	**53,3 %**
401	*77,0*	*57,2*	*96,4*	*74,0*	*87,0*	*66,0*
402	*93,0*	*72,2*	*94,4*	*68,3*	*94,0*	*70,1*
403	*82,0*	*60,5*	*98,0*	*44,1*	*90,0*	*52,3*
404	*82,0*	*64,0*	*97,6*	*53,6*	*90,0*	*59,0*
405	*74,0*	*56,4*	*98,7*	*58,4*	*86,4*	*57,4*
IV	**81,6 %**	**62,0 %**	**97,0 %**	**60,0 %**	**89,1 %**	**61,0 %**
501	*98,0*	*85,4*	*100*	*98,2*	*99,0*	*91,5*

502 503 504 505	*97,0*	*83,0*	*97,8*	*94,5*	*97,4*	*88,8*
	91,1	*70,0*	*92,0*	*77,0*	*92,0*	*74,0*
	91,3	*75,4*	*85,0*	*68,4*	*88,0*	*72,0*
	95,0	*78,0*	*96,0*	*68,2*	*95,5*	*73,1*
V	**94,5** %	**78,4** %	***94,2*** %	**81,3 %**	**94,4 %**	**80,0 %**
601 602 603	*94,2*	*77,0*	*100*	*67,6*	*97,1*	*72,3*
	91,0	*70,0*	*100*	*62,3*	*95,5*	*66,2*
	66,0	*43,5*	*98,7*	*53,0*	*82,4*	*48,3*
VI	***83.7*** %	***63.5*** %	***99,6*** %	**61,0 %**	**92,0 %**	**62,3%**
Ընդամենը	***83.0*** %	***58.0*** %	***88,3*** %	**61,0 %**	**86,0 %**	**60,0%**

Աղյուսակ № 3

2022-2023 ուստարի

«Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների
ակադեմիական պարտքերի քանակ, արդյունքներ

Ֆակուլտետ	Ձմեռային քննաշրջան		Ամառային քննաշրջան	
	Անբավ./ Չներկ.	Հանձ./Չհանձ.	Անբավ./Չներկ.	Հանձ./Չհանձ.
Բուժական	**339/351**	**39/256**	**190/165**	**124/231**
Ստոմատոլոգիական	**82/56**	**88/ 50**	**25/22**	**16/31**
Ընդամենը	**421/407**	**127/306**	**215/187**	**140/262**

- 2021-2022 ուստարվա համեմատ 2022-2023 ուստարվա «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների քննաշրջանների առաջադիմության արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ այս ուսումնական տարում ևս պետք է բարելավել որոշ դասընթացների դասավանդման դրվածքը, մասնավորապես՝ «Մարդու անատոմիա», «Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն», «Նորմալ ֆիզիոլոգիա», «Տեղագրական անատոմիա»:

2022-2023 ուստարում համալսարանն ունեցել է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 117 շրջանավարտ՝

- «Բուժական գործ»՝ մասնագիտություն՝ 66
- «Ստոմատոլոգիա» մասնագիտություն՝ 51:

Գծապատկեր № 6

«Բուժական գործ» ֆակուլտետ



Գծապատկեր № 7

«Ստոմատոլոգիա» ֆակուլտետ



Ամփոփելով 2022-2023 ուստարվա ամփոփիչ ատեստավորման առաջադիմության արդյունքներն՝ արձանագրվեց, որ ընդհանուր առմամբ հանձնաժողովները գոհ էին ուսանողների գիտելիքներից: Նախորդ ուստարվա համեմատությամբ երկու ֆակուլտետների որակական առաջադիմության վրա բացասաբար էր անդրադարձել 2021-2022 ուստարում «Սուրբ Թերեզայի» անվան բժշկական համալսարանից տեղափոխված ուսանողների առաջադիմությունը:

Աղյուսակ № 4

«Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների
ամփոփիչ ատեստավորման առաջադիմություն

N	Ֆակուլտետ	Ընդհ.առաջ.%	Որակ.առաջ.%
1.	Բուժական	95,1 %	59,5 %
2.	Ստոմատոլոգիական	*100* %	69,0 %
Ընդամենը		97,6 %	64,3 %

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ունեցել ենք այլ բժշկական բուհերից, բժշկական քոլեջներից «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների տարբեր կուրսեր ընդունված կամ տեղափոխված թվով 126 (բուժ.՝ 108, ստոմ.՝ 18) ուսանողներ: Ի տարբերություն նախորդ տարիների, հաշվետու տարում «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետներում հայազգի ուսանողներից ձևավորվեցին երկրորդ կուրսեր՝ մեկական խմբերով, սակայն բուժական ֆակուլտետի խումբը ձմեռային քննաշրջանից հետո լուծարվեց:

Հաշվետու տարում Բուժական ֆակուլտետի երկրորդ կուրս են տեղափոխվել նաև Դուբայի “Success Point” համալսարանի առաջին կուրսն ավարտած ուսանողները, որի հետ ԱԲՀ-ն ունի պայմանագիր: Վերջիններս առարկայական տարբերություններ չեն ունեցել:

Բացի վերոնշյալներից, ուսանողների շարժունության այսպիսի քանակը պայմանավորված է նաև Ուկրաինայի վերջին դեպքերի, ինչպես նաև «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարանի» լուծարման հետ:

Տեղափոխված ուսանողների համար վերհանված առարկայական տարբերությունների համար կազմվել է առարկայական տարբերությունների հանձնման ժամանակացույց, համապատասխան ամբիոններում «Տեղագրական անատոմիա և օպեատիվ վիրաբուժություն», «Ախտաբանական անատոմիա», «Ճառագայթային ախտորոշում», «Վիրաբուժական հիվանդություններ», «Վնասվածքաբանություն և օրթոպեդիա» դասընթացներից և ուսումնա-արտադրական պրակտիկաներից «Բուժքրոջ օգնական», «Մանիպուլիացիոն բուժքրոջ օգնական», «Բժշկի օգնական-թերապիա», «Բժշկի օգնական-վիրաբուժություն» կազմակերպվել են պարապմունքներ, մյուս առարկաներից՝ խորհրդատվություններ, և, համաձայն հաստատված ժամանակացույցի, ուսանողները հանձնել են այդ տարբերությունները:

Հաշվետու տարում աշնանային և գարնանային կիսամյակներում անցկացվել են խորհրդակցություններ համալսարանում աշխատանքի ընդունված նոր դասախոսների հետ, որոնց ծանոթացվել են համալսարանի ուսումնական գործընթացին, համալսարանում գործող կարգերին, կանոնակարգերին:

Հաշվետու ուստարվա ընթացքում դեկանատը ակտիվ մասնակցել է նաև.

- համալսարանի կայքի թարմացման և արդիականացման աշխատանքներին,
- հանդիսավոր նիստերի հետ կապված աշխատանքներին՝ ուսումնական տարվա մեկնարկին և շրջանավարտներին դիպլոմների հանձնմանը նվիրված,
- «Կրթություն և կարիերա EXPO 2023» ցուցահանդեսի կազմակերպչական աշխատանքներին,
- 2023թ. մայիսի 2-7-ը, Միջազգային համագործակցության շրջանակներում, համալսարանի պատվիրակության հետ այց ԱՄԷ-ի մի շարք կրթօջախներ՝ Շարժայի «Success Point college», Աջմանի «Alshola American» դպրոցը և համալսարանի գործընկեր «Campus International» կազմակերպության Դուբայի մասնաճյուղ:
- Համալսարանի ուսանողների մերձեցման երեկոյի,
- Շրջանավարտների ավարտական հանդիսության,
- Շախմատի մրցաշարի և այլ նմանատիպ միջոցառումների կազմակերպմանը:

12. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

ՄՌԿ և ընդհանուր բաժինը 2022-2023 ուսումնական տարում շարունակել է իր գործունեությունը՝ իր կանոնադրության և ԱԲՀ ներքին կանոնակարգերի համաձայն:

2022-2023 ուսումնական տարում համալսարանի աշխատողների թիվը կազմել է 101 մարդ:

Համալսարանի անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև (գծապատկեր 1 և 2-ում):

Գծապատկեր № 1

Պրոֆեսորադասախոսական կազմի համեմատական տվյալներ



Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը՝ 68 մարդ /որից 46-ը կին/, 5 դասախոս համատեղության կարգով զբաղեցնում են վարչական պաշտոններ:

Գծապատկեր № 2

Համալսարանի վարչական անձնակազմը



Հաշվետու տարում վարչական անձնակազմը համալրվել է 2 աշխատակցով:
2022-2023 ուստարվա ընթացքում կնքվել է 76 աշխատանքային պայմանագիր: Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 10-ը /պայմանագրի լուծարմամբ, որից 6-ը հիմնական աշխատող/, իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 75-ը:

- 2022-2023 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է ռեկտորի հրաման:

- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N 1450-Ն որոշման.
  - պրոֆեսորադասախոսական կազմ՝ 42 աշխատանքային օր,
  - ռեկտոր, դեկան, վարչական ստորաբաժանումների ղեկավարներ՝ 30 աշխատանքային օր,
  - ԳԲՈՒԿ-ի աշխատակիցներ՝ 26 աշխատանքային օր,
  - վարչական, ուսումնաօժանդակ և տնտեսական մասին՝ 24 աշխատանքային օր:
- Հաստիքացուցակը կազմվել է 31.08.2022թ-ին և հաստատվել կառավարման խորհրդի նիստում:
- Համալսարանում աշխատում են տարիքային 9 թոշակառուներ: Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:
- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում: Բոլոր աշխատողների, ներառյալ ժամավճարային աշխատողների, անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:
- 2022-2023 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 754-ը /03.07.2023թ-ի դրությամբ/:
- Կատարվել է հրամանների կրկնօրինակների և/կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում: Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ /ելից-1646, մտից-181/ համապատասխան գրանցամատյաններում:
  Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:
- Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:
- Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 578 տեղեկանք /աշխատողներին՝ 82, ուսանողներին՝ 496/, բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:
- 2022-2023 ուստարվա ընթացքում պարգևատրվել են 2 աշխատակից, ինչպես նաև կատարվել է 7 աշխատակիցների աշխատավարձի բարձրացում:
- Համալսարանում պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքային առաջ-խաղացումն իրականացվում է հաշվի առնելով թեկնածուի անհատական ուղին, նրա դասախոսական և հետազոտական կարողությունները և տվյալ ոլորտում ունեցած մասնագիտական փորձը: 2022-2023 ուստարում որպես աշխատանքային առաջխաղացում Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, «Բժշկակենսաբանական

առարկաների» ամբիոնի դասախոս, բժիշկ, բ.գ.դ., Արսեն Լևոնի Մինասյանին ՀՀ ԲՈԿ-ի կողմից շնորհվել է պրոֆեսորի կոչում:

- Հունիսի 23-ից 25-ը ԱԲՀ դասախոսներ Նաիրա Հունանյանը, Հայարփի Ջավրուշյանը և Աննա Օվչյանը մասնակցել են «Կրթական ծրագրերի համահնչեցում (Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիա) չափորոշիչներին» թեմայով վերապատրաստման դասընթացներին: Դասընթացների ավարտին վերապատրաստման մասնակիցները ստացել են հավաստագրեր:
- ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ն.Թարջումանյանը և ՄՌԿ և ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Վարդ Գաբրիելյանը ս/թ ապրիլ ամսին մասնակցել են EDUX ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված ՀՀ Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ դասընթացին:
- Արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը մասնակցել է Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ENIC Armenia) 2022 թվականի դեկտեմբերի 23-ին կազմակերպած երկու դասընթացների՝ «Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրներ և սկզբունքներ» և «Կեղծարարությունը կրթության մեջ» թեմաներով: Դասընթացի ավարտին Անի Սարգսյանը ստացել է վկայական:
- Հարկ է նշել, որ հաշվետու ուստարում ԱԲՀ Էթիկայի հանձնաժողովը, որի նախագահն է ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչը, էթիկայի խախտման որևէ դեպք չի արձանագրել:
- ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի առաջարկով նախատեսվում է իրականացնել ՄՌԿ և ընդհանուր բաժնի գործունեության մշտադիտարկում:

Ընդհանուր առմամբ ՄՌԿ և ընդհանուր բաժնի աշխատանքները կատարվել են պատշաճ, անխափան, բարեխիղճ և ժամանակին: Բոլոր հաշվետվությունները ներկայացվել են ժամկետներում:

12. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

Ավանդական բժշկության համալսարանի Արտաքին կապերի բաժինը (այսուհետ Բաժին) համալսարանի միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածք է, որը գործում է ՀՀ օրենսդրության համապատասխան, ԱԲՀ-ի և Արտաքին կապերի բաժնի կանոնակարգի հիման վրա:

Արտաքին կապերի բաժնի հիմնական նպատակն է ապահովել համագործակցությունը ներպետական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների միջև, ընդլայնել միջազգային համագործակցությունը, նպաստել ուսանողների և պրոֆեսորա-դասախոսական կազմի փոխանակման ծրագրերին, համալսարանի և միջազգային այլ կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, այլ երկրներից ուսանողների ներգրավման ու երկրների աշխարհագրության մեծացմանը:

Բաժնի աշխատանքներն իրականացնում են բաժնի վարիչը, բաժնի առաջատար մասնագետը և բաժնի մասնագետը՝ ռեկտորի և համալսարանի ստորաբաժանումների հետ համատեղ:

1. ԱԲՀ ուսանողների ընդունելություն և հրամանագրում

1.1. Մայիս-հունիս ամիսներին բաժնի կողմից կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության փաստաթղթերի նախապատրաստում:

1.2. ՀՀ ԿԳՄՍՆ կողմից սահմանված ժամկետներում կատարվել է դիմորդների անձնական դիմումների ու գործերի ուսումնասիրում և ներկայացում ՀՀ ԿԳՄՍՆ՝ փորձաքննության:

1.3. Ուսումնական մասի վարիչի և դեկանի հետ համատեղ կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության հանձնաժողովի կազմի ընտրություն և հրամանագրում:

1.4. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ համապատասխան հրահանգների հիման վրա ուսանողների հրամանագրում:

1.5. Նոյեմբերին կատարվել է համալսարանի օտարերկրյա ուսանողների ընդունելության արդյունքների հաստատում՝ Ուսումնական մասի վարիչի և դեկանի հետ համատեղ:

1.6. Բաժնի հիմնական գործառույթներից է նաև օտարերկրյա ուսանողների ժամանակավոր կացության քարտերի կազմակերպման գործընթացը, որի համար բաժինը համագործակցում է ՀՀ Անձնագրային և վիզաների վարչության Կենտրոնական անձնագրային բաժանմունքի հետ: Կացության քարտերի հետ կապված աշխատանքը կատարվել է 2022թ. սեպտեմբեր–նոյեմբեր և 2023թ. փետրվար-մայիս ամիսներին՝ ուսանողներին բուհ հրամանագրելուց և ՀՀ ԿԳՄՍՆ հաստատումը ստանալուց հետո: Բաժնի կողմից պատրաստվել են անհրաժեշտ փաստաթղթեր և ներկայացվել են ՀՀ ԿԳՄՍՆ, ինչպես նաև ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն: 2022-2023 ուսումնական տարում կատարվել է նաև արդեն ԱԲՀ ուսանող հանդիսացող ուսանողների ժամանակավոր կացության քարտերի վերաձևակերպում:

2. Օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացը

2.1. Արտաքին կապերի բաժինը համագործակցում է ուսանողների ներգրավմամբ զբաղվող օտարերկրյա կազմակերպությունների հետ (Campus International, Study Medicine Europe և այլն):

2.2. Ուսանողների հավաքագրումը կատարվել է նաև անմիջապես բաժնի կողմից՝ արտերկրներից ստացվող անհատական դիմումների հիման վրա:

2.3. Բաժինն արտահամալսարանական կառույցների հետ գտնվելով մշտական կապի մեջ (էլեկտրոնային, հեռախոսային և այլն)՝ նրանց պարբերաբար տեղեկացրել է ընդունելության կարգի մեջ կատարվող փոփոխությունների մասին, ինչպես նաև նրանց ցուցաբերել է անհրաժեշտ խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն տարվա ընթացքում:

2.4. Դիմորդների դիմումները ներկայացվել են համալսարանի պաշտոնական կամ Արտաքին կապերի բաժնի էլեկտրոնային հասցեներին: Բաժնի կողմից նախնական փուլում ճշտվել է դիմորդի քաղաքացիությունը/անձնագրային տվյալները, միջնակարգ/բարձրագույն կրթության վկայականի/այլ վկայականների առկայությունը, ներկայացվել են համալսարանի կողմից առաջարկվող ծառայություններն ու հնարավորությունները:

2.5. Ուսանողների հավաքագրման գործընթացն իրականացվել է ողջ տարվա ընթացքում:

2.6. Բաժինն աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ օտարերկրյա քաղաքացիներին մուտքի արտոնագիր տրամադրելու համար, կատարել է հարցումներ և ստացել պարզաբանումներ:

3. Տարվա ընթացքում Բաժնի վարիչը, ըստ անհրաժեշտության, պատրաստել և ներկայացրել է հաշվետու տեղեկանքներ ՀՀ ԿԳՄՍՆ, ԱԳՆ ստորաբաժանումներին և այլն: 2022-2023 ուստարում Բաժնի վարիչը և բաժնի առաջատար մասնագետը պատրաստել են թվով **7** արձանագրություն, որը պահվում է բաժնի առօրյա գործերում:

4. Բաժինը համալսարանի ստորաբաժանումների հետ միասին մասնակցել է ուսանողների հետ տարվող աշխատանքներին՝ հանդես գալով որպես համակարգող օղակ ուսանողների և համալսարանի ստորաբաժանումների միջև:

Բաժինն աջակցել է օտարերկրյա ուսանողներին ինչպես կրթական, այնպես էլ իրավական, առօրեական և այլ հարցերում՝ ստեղծելով հնարավորինս բարենպաստ պայմաններ ուսանողների համար:

5. 2022-2023 ուստարում գրանցվել է դիմորդների թվի որոշակի աճ: Գծապատկեր № 1-ում ներկայացված է 2022-2023 ուստարվա ուսանողների ընդունելության արդյունքները 2021-2022 ուստարվա հետ համեմատականով:

Գծապատկեր №1



Գծապատկեր №2

Գծապատկեր № 2-ում ներկայացված է 2021-2022 և 2022-2023 ուստարիների ուսանողների ընդունելության արդյունքները ըստ երկրների:



- 2022-2023 ուստարվա աշնանային կիսամյակում Ավանդական բժշկության համալսարան է տեղափոխվել 38 օտարերկրյա ուսանող՝
  - *Բուժական ֆակուլտետ II կուրս՝ 17 (Հնդկաստան՝ 16, Բանգլադեշ՝ 1)*
  - *Բուժական ֆակուլտետ III կուրս՝ 5 (Հորդանան՝ 1, Իրաք՝ 1, Շրի Լանկա՝ 1, Հնդկաստան՝ 2)*
  - *Ստոմատոլոգիական ֆակուլտետ III կուրս՝ 1 (Հորդանան)*
  - *Բուժական ֆակուլտետ IV կուրս ՝ 11 (Հորդանան՝ 3, Հնդկաստան՝ 8)*
  - *Բուժական ֆակուլտետ V կուրս՝ 4 (Գանա՝ 1, Հնդկաստան՝ 1, Եգիպտոս՝ 1, Հնդկաստան՝ 1)*

- 2022-2023 ուստարվա գարնանային կիսամյակում Ավանդական բժշկության համալսարան է տեղափոխվել 44 հնդիկ ուսանող՝
  - *Բուժական ֆակուլտետ II կուրս՝ 3*
  - *Բուժական ֆակուլտետ III կուրս՝ 24*
  - *Բուժական ֆակուլտետ IV կուրս՝ 13*
  - *Բուժական ֆակուլտետ V կուրս՝ 4*
- 2022-2023 ուստարվա աշնանային կիսամյակում վերականգնվել են 2 օտարերկրյա ուսանող՝
  - *Ստոմատոլոգիական ֆակուլտետ II կուրս՝ 1 (Հորդանան)*
  - *Բուժական ֆակուլտետ V կուրս՝ 1 (Մեծ Բրիտանիա)*

Բուժական ֆակուլտետ և Ստոմատոլոգիական ֆակուլտետ

N	Երկիր	Քանակ	Սեռ
1.	Հնդկաստան	404	256 իգ. 272 ար.
2.	Իրաք	19	
3.	Մեծ Բրիտանիա	15	
4.	Հորդանան	49	
5.	Իրան	24	
6.	Ֆիլիպիններ	4	
7.	Իռլանդիա	3	
8.	Շվեդիա	2	
9.	Շրի Լանկա	1	
10.	Գերմանիա	1	
11.	Իտալիա	1	
12.	Եգիպտոս	1	
13.	Վանուատու	1	
14.	Ուկրաինա	1	
15.	Սիրիա	1	
16.	Գանա	1	
Ընդամենը՝ 528			

6. ԱԲՀ արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը հաշվետու ուստարում մասնակցել է Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ENIC Armenia) կողմից 2022 թվականի դեկտեմբերի 23-ին կազմակերպված երկու դասընթացի՝ «Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրներ և սկզբունքներ», «Կեղծարարությունը կրթության մեջ» թեմաներով:

Դասընթացները նախատեսված էին ՀՀ բուհերի ղեկավար կազմի, միջազգային բաժինների և ընդունելության հարցերով զբաղվող անձնակազմի համար: Դասընթացների նպատակն էր նպաստել բուհերում օտարերկրյա որակավորումների ճանաչման հետ կապված հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանը:

7. 2023 թվականի մարտի 1-ին Ավանդական բժշկության համալսարանի և «AvoTar» ՍՊԸ-ի (Մասնագիտական ուսուցման և հավաքագրման գործակալություն) միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր:

Ավանդական բժշկության համալսարանը միշտ կարևորել և կարևորում է նմանատիպ համագործակցությունները, քանի որ այն մեծ հնարավորություն է ընձեռում համալսարանին պարբերաբար կապի մեջ մնալ շրջանավարտների հետ և վերջիններիս աջակցել արտասահմանում համապատասխան աշխատանք գտնելու հարցում:

8. 2023թ.-ի ապրիլի 5-7-ը “Logos Expo” կենտրոնում ԱԲՀ-ն մասնակցեց «Կրթություն և կարիերա» EXPO 2023 ցուցահանդեսին՝ https://www.youtube.com/watch?v=2by1UuHITR0), որին իր ակտիվ մասնակցություն ունեցավ Արտաքին կապերի բաժինը: Բաժնի մասնագետներ Լ.

Վարդանյանը, Հ. Գյուլնազարյանը և Ուսանողական խորհրդի նախագահ Էրֆան Աղային նկարահանեցին փոքրիկ ռեպորտաժ, որտեղ հակիրճ ներկայացվում է ԱԲՀ-ն և ցուցահանդեսը (հղումը՝ https://www.youtube.com/watch?v=-gDsV_wkm94&t=7s):

9. Լոնդոնի «Study Medicine Europe» կազմակերպության հետ կնքվեց նոր պայմանագիր 5 տարի ժամկետով, քանի որ պայմանագրի ժամկետն ավարտվել էր: Նախկին պայմանագրում կային որոշ կետեր, որոնք վերանայվեցին և երկու կողմերի համաձայնությամբ փոփոխվեցին: Որակի ապահովման և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանի կողմից բարձրացրած խնդիրը՝ մենաշնորհային դիրքի եզրույթի հանման վերաբերյալ, քննարկվեց և պայմանագրից հեռացվեց այդ կետը առանց մյուս կողմի առարկության: Պայմանագրում ավելացան նաև նոր կետեր:

10. 2023թ.-ի ապրիլի 13-ից 15-ը Լեհաստանի Կրակով քաղաքում տեղի ունեցավ միջազգային բժշկական ուսանողական 31-րդ կոնֆերանսը, որը կազմակերպել էր Կրակովի Յագելլոնիան համալսարանի Ուսանողական Գիտական խորհուրդը: Կոնֆերանսին ակտիվորեն մասնակցեցին ԱԲՀ «Արտաքին կապեր» բաժնի առաջատար մասնագետ Լ. Վարդանյանը և «Բուժական գործ» ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող Սամուել Ադոմահը, ով նաև հանդիսանում է ԱԲՀ-ի «Ուսանողական գիտական ընկերության» քարտուղար:

11. Միջազգային համագործակցության շրջանակներում համալսարանի պատվիրակությունը 02.05.2023թ.–07.05.2023թ. մեկնեց ԱՄԷ-ի Դուբայ, Շարժա և Աջման քաղաքներ՝ այցելելու «Success Point College», «Alshola American» դպրոց և «Campus International» կազմակերպության Դուբայի մասնաճյուղ: Պատվիրակությանը դիմավորեց համալսարանի գործընկեր, «Campus International» կազմակերպության տնօրեն Աշոկ Կարուվարաթոդին:

12. 2023 թվականի մայիսի 19-ին միջազգային համագործակցության շրջանակներում Ավանդական բժշկության համալսարանը հյուրընկալեց ԱՄԷ-ի Շարժա քաղաքի «Success Point college»-ի Մարքեթինգի և PR-ի ղեկավարին, դասախոսներին, իրենց ուսումը ԱԲՀ-ում շարունակել ցանկացող ուսանողներին և նրանց ծնողներին:

13. 2023թ.-ի մայիսի 25-ին Ավանդական բժշկության համալսարանում տեղի ունեցավ «Ապացույցների վրա հիմնված ինտեգրատիվ բժշկություն» խորագրով բժշկական ուսանողական կոնֆերանս, որը կազմակերպել էր ԱԲՀ-ի Ուսանողական Գիտական խորհուրդը:

13. ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԲՈՒԿ-ի բժշկական օգնության և սպասարկման տեսակները չորսն են՝ բժշկական ընդհանուր պրակտիկա, ստոմատոլոգիական, ատամնատեխնիկական, ռեֆլեքսոթերապևտիկ:

Աշխատողների ընդհանուր քանակը 14 է, որից տասը բժիշկներ են՝ 1 հոմեոպաթ, 1 ներզատաբան, 4 ռեֆլեքսոթերապևտ, 1 գաստրոէնտերոլոգ, 3 ստոմատոլոգ: Միջին բուժանձնակազմում ընդգրկված են՝ 2 բուժքույր, 1 սանիտարուհի, 1 ատամնատեխնիկ:

Կենտրոնում իրականացվում է ըստ մասնագիտությունների պրակտիկ ուսումնական գործընթաց և բուժսպասարկում, բացի դրանից նաև գիտական աշխատանքներ՝ ավանդական բժշկության բնագավառում:

- Կատարվում է հիվանդների վերլուծություն ուսանողների մասնակցությամբ, մշակվում է բուժման պլան և ինտեգրատիվ բուժում:
- Անցկացվում են բուժական պրոցեդուրաներ, ծանոթացվում է կատարման տեխնիկային և անվտանգության կանոններին:
- Կատարվում է ասեղ-այրում թերապիա, բազմասեղային ներգործություն, բուժական մերսում, ասեղ-այրում թերապիան զուգորդվում է ֆիտոթերապիայի և ֆարմակոթերա-պիայի հետ:

2022թ. բուժման կուրս են անցել թվով 163 հիվանդ, իսկ ստոմատոլոգիական կաբինետում՝ 138:

Ստոմատոլոգիական բաժանմունքում բացի հիվանդների սպասարկումից, անցկացվում են ուսումնական գործնական պարապմունքներ, ուսումնաարտադրական պրակտիկաներ, որոնց ընթացքում ուսանողները ձեռք են բերում համապատասխան հմտություններ ու կարողություններ:

Օտարերկրյա ուսանողների մի մասը ցանկությամբ ուսումնաարտադրական պրակտիկան անցկացվել է Համալսարանի ԳԲՈՒԿ-ում, որն էլ իրականացրել են մեր դասախոսները: «Բուժքրոջ օգնական» /II կուրս/, «Բժիշկ ստոմատոլոգ-թերապևտի օգնական» /III կուրս/ «Բժիշկ ստոմատոլոգ-վիրաբույժի օգնական» /IV կուրս/, «Բժիշկ ստոմատոլոգ-օրթոպեդի օգնական» /IV կուրս/, V կուրսի «Մանկական ստոմատոլոգի օգնական» ուսումնաարտա-դրական պրակտիկաներն անցկացվել են ԳԲՈՒԿ-ում:

«Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա», «Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում» առարկաների շրջանակում ուսանողներն ուսումնասիրել են ստոմատոլոգիական կաբինետների կահավորումը, ստոմատոլոգիական գործիքները, ստոմատոլոգիական գործիքների ախտահանումը, նրանց տեսակները, ավտոկլավները, դեոնտոլոգիան և էրգոնոմիկան ստոմատոլոգիայում:

2022-2023 ուստարվա գարնանային կիսամյակում «Բուժքրոջ օգնական» /II կուրս/, «Բժիշկ ստոմատոլոգ-թերապևտի օգնական» /III կուրս/, «Բժիշկ ստոմատոլոգ-օրթոպեդի օգնական» /IV կուրս/ և «Բժիշկ ստոմատոլոգ-վիրաբույժի օգնական» ուսումնաարտադրական պրակտի-կաները նույնպես անցկացվել են ԳԲՈՒԿ-ում՝ նախատեսված ժամանակացույցով:

14. ԳՐԱԴԱՐԱՆ

2022-2023 ուստարում շարունակվել է գրադարանի ծառայությունների մատուցման բարելավումն ու ընդլայնումը: Ուսանողների հոսքն ընթերցասրահ այս ուսումնական տարում ևս ակտիվ է եղել: Ավելացել է նաև գրքատայցը, բացվել են բազմաթիվ գրադարանային քարտեր:

Այս ուսումնական տարում ԱԲՀ-ն շարունակել է իր համագործակցությունը Ազգային գիտաբժշկական գրադարանի, «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա» ՀԿ-ի հետ: Վերջինիս հետ համագործակցության շրջանակներում կնքվել են մի շարք պայմանագրեր:

Ուսումնական տարվա սկզբում լրացվել է դիմում-հայտ, ըստ որի՝ հոկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը ԱԲՀ-ն անվճար մուտք է ստացել «EBSCO Premier Package»-ի 11 շտեմարաններ: Մուտքն ապահովվում էր փորձնական կիրառման և օգտագործման հնարավորություն՝ հետագա համագործակցության նպատակով: Հիշյալ շտեմարաններից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրվել է, բժշկական ուղղվածություն ունեցող շտեմարաններն առանձնացվել են, իսկ դրանց մասին գրված հակիրճ նկարագրությունները՝ տեղադրվել ԱԲՀ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը համալսարանի ուսանողության և պրոֆեսորա-դասախոսական կազմի համար անվճար հասանելի է եղել նաև «Academic Reference» շտեմարանի «CNKI Express» անգլալեզու շտեմարանը (նաև ներբեռնելու հնարավորությամբ): Շտեմարանում առկա էին տարբեր բնագավառների (SS, մենեջմենթ, տուրիզմ, տնտեսագիտություն, բժշկություն, ֆիզիկա, իրավաբանություն և այլն) վերաբերյալ ամսագրեր, հոդվածներ, սեղմագրեր և գիտաժողովների նյութեր:

«Mathematical sciences publishers» ամսագրի անվճար հասանելիությունը (որն ավարտվում էր 31/12/2022-ին) կրկին երկարաձգելու համար լրացվել և ուղարկվել է նոր արտոնագիր, որով բաժանորդագրությունը ուժի մեջ է մինչև 2025 թվականը:

2022 թվականի դեկտեմբեր ամսին լրացվել է ևս 4 ամսագրի արտոնագիր՝ MSP journals/1.01.2023-31.12.2025/, Sage Premier Collection/1.01.2023-31.12.2025/, Edvard Elgar Jounals/1.01.2023-31.12.2025/, Open Edition Freemium for Journals/1.01.2023-31.12.2025/:

Ուսանողները և դասախոսները պարբերաբար տեղեկացվել են «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից համալսարանին փոխանցած էլեկտրոնային գրադարանների անվճար հասանելիությունների մասին: Էլեկտրոնային գրադարանների թվում է՝ «JSTOR» թվային գրադարանը, որի հանրահասանելի ամսագրերը և էլեկտրոնային գրքերը ունեն շատ լայն թեմատիկ ընդգրկվածություն՝ բժշկություն, բնական գիտություններ, հասարակական գիտություններ և այլն:

2023 թվականի մարտի 31 –ին ուսանողներին և դասախոսներին տեղեկացվել է ևս մեկ շտեմարանի՝ բրիտանական «CORE»-ի (Connecting Repositories) մասին, որն աշխարհում հանրահասանելի շտեմարանների ամենամեծ հավաքածուն է: Այն մեկ հարթակում է միավորում համաշխարհային ամենատարբեր գիտական ամսագրերը, հոդվածները,

ատենախոսությունները, հետազոտությունները և այլն: Հիշյալ հավաքածուն հանրահասանելի է եղել բոլորի համար:

24.11.2022–25.11.2023թ. գրադարանավարը մասնակցել է Հայաստանի ազգային գրադարանում ՀԹԳԱ-ի և «EBSCO»-ի համագործակցությամբ անցկացվող երկօրյա դասընթացներին:

20.04.2023թ. Ազգային գրադարանային շաբաթվա ընթացքում, գրադարանավարը մասնակցել գրադարանավարների և հետազոտողների համար անցկացվող երկու սեմինարի:

ԱԲՀ-ի գրադարանը սերտ համագործակցել է համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ: Առանձնակի հարկ է նշել ԱԲՀ Գիտական մասի հետ համագործակցությունը: Լինելով ՀԹԳԱ անդամ-կազմակերպություն՝ ԱԲՀ-ն ստացել է միջազգային մի շարք ամսագրերում անվճար կամ զեղչված պայմաններով գիտական հոդված հրատարկելու հնարավորություն: Այս ոլորտում աշխատանքներն ընթացքի մեջ են:

Դասախոսների կողմից իրենց դասախոսությունների էլեկտրոնային տարբերակների և էլեկտրոնային նոր գրքերի տրամադրումը գրադարան ևս շարունակական բնույթ է ունեցել:

15. ԱԲՀ ԿԱՅՔԷՋ

2022-2023 ուստարվա ընթացքում ԱԲՀ պաշտոնական կայքում աշխատանքներ են կատարվել մի քանի ուղղություններով՝ կառուցվածքային, բովանդակային փոփոխություններ, ինֆորմացիայի, կանոնակարգերի և այլ փաստաթղթային թարմացումներ ու մուտքեր, վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծում, ինֆորմացիոն-տեղեկատվական նյութերի պատրաստում և տեղադրում:

Կառուցվածքային, բովանդակային փոփոխություններ: Համաձայն 2020-2021 ուստարում մշակված «Կայքէջի արդիականացման ուղեցույցի»՝ տարվել են բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ: Մասնավորապես՝ «Ամբիոններ» բաժնում ամեն ամբիոնի համար առանձնացվել է պատուհան, որտեղ ներառվել են ամբիոնի վարիչի, պրոֆեսորա-դասախոսական կազմի պաշտոնի անձնագրերը, հաշվետվությունները, ինչպես նաև ամբիոնի կատարած աշխատանքները ներկայացնող որոշ նկարներ: Հավաքագրված են ամբիոնների արխիվային տվյալները և պատրաստ «Ամբիոնների պատմությունը» ենթավերնագրով բաժնի բովանդակության համար, կատարավել է նաև բաժնի գլխավոր նկարի վիզուալ համալրում:

Թարմացումներ և մուտքեր: 2022-2023 ուստարվա ընթացքում ավելացվել է «Կառուցվածքի գծապատկերը»՝ երկու լեզուներով, Գիտական, Ուսանողական և Գիտական ուսանողական խորհուրդների կազմերը, Ուսանողական և Գիտական ուսանողական խորհրդի հաշվետվություններն ու աշխատանքային պլանները, ինչպես նաև ԱԲՀ մյուս ստորաբաժանումների աշխատանքային պլաններն ու հաշվետվությունները, Ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունները, մասնագետների պաշտոնի անձնագրերը, կանոնադրություններ, կանոնակարգեր, մշտադիտարկումներ, վերլուծություններ, մասնագրեր և մի շարք այլ փաստաթղթեր:

Վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծում: Հաշվետու ուստարվա ընթացքում ***Google analytics-ի*** օգնությամբ վեր են հանվել 2018-ից մինչ 2023 թվականի հուլիս

ամիսն ընկած ժամանակահատվածում Ավանդական բժշկության համալսարանի կայքէջի դիտելիության տվյալները՝ այս կերպ լրացնելով 2017-ից ևեթ այս ոլորտում եղած բացը: Կայքէջի դիտելիության տվյալներն ուսումնասիրվել են ըստ աշխարհամասերի, պետությունների, տարիքի և սեռի: Առանձնացվել են նոր և հին օգտվողների տվյալներն՝ առանձին սյունակներով: Բացի այդ, կատարվել է www.utm.am պաշտոնական կայքէջի դիտելիության տվյալների վերաբերյալ վերլուծություն:

Ինֆորմացիոն-տեղեկատվական նյութեր: 2022 թվականի սեպտեմբերի 1-ից սկսած բազմաթիվ ինֆորմացիոն-տեղեկատվական բնույթի նյութեր են կազմվել և տեղադրվել կայքէջի «Նորություններ և իրադարձություններ», «Հայտարարություններ» բաժիններում: Առանձին թղթապանակներով առանձնացվել է 2019 թվականից սկսած կայքէջում և ֆեյսբուքյան էջում տեղադրված ինֆորմացիոն բնույթի նյութերը /այդ թվում նաև հայտարարությունները/ իրենց լուսանկարներով: Յուրաքանչյուր տարվա կատարած աշխատանքներն ընդգրկված են համապատասխան տարեթվով վերնագրված թղթապանակում:

Ֆեյսբուք: 2022-2023 ուստարվա ընթացքում ակտիվ է եղել նաև Ավանդական բժշկության համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջը: Բոլոր գրառումներն արվել են բացառապես երկլեզու՝ հայերենով և անգլերենով: Վիճակագրական տվյալների համաձայն՝ ավելացել են գրառումների դիտումները, հասանելիությունը, հավանումների քանակներն ու օգտատերերի շրջանում տարածումը:

16. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հաշվետու ժամանակահատվածում ԱԲՀ Ուսանողական խորհուրդն իր գործունեությունն իրականացրել է համաձայն ՈՒԽ-ի պլանի և կանոնադրության դրույթների:

2022-2023 ուստարվա ընթացքում գումարվել է 6 նիստ, այդ թվում՝ 2 ընդլայնված: Բոլոր նիստերն արձանագրվել են:

ՈՒԽ-ն 2022-2023 ուստարվա ընթացքում ապահովել է ուսանողությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ: Ուսանողներն իրազեկվել են իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, ինչպես նաև ծանոթացել ԱԲՀ-ում գործող ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ուսումնառության արդյունքների գնահատմանը վերաբերող փաստաթղթերին և այլն:

ԱԲՀ-ում գործում են ուսանողների կրթական կարիքները վերհանող մի քանի մեխանիզմներ՝ դասախոսների, դեկանի և ուսումնական մասի վարիչի հետ կազմակերպվող քննարկումները, ուսանողների շրջանում անցկացվող հարցումները: Կուրսերի խորհրդատուների աշխատանքի միջոցով բացահայտվում են ուսումնական գործընթացի կազմակերպման, գիտելիքների գնահատման համակարգի, սեփական իրավունքների իմացության և այլ խնդիրներ:

Ուսանողներն իրենց խնդիրները, իրենց հուզող հարցերը հնարավորություն ունեն քննարկելու նաև ռեկտորի, արտաքին կապերի բաժնի մասնագետների, դեկանի, գիտական մասի վարիչի հետ:

Հաշվետու ուստարում ուսխորհրդի կազմում կատարվել է փոփոխություն՝ ՈՒԽ նախագահի ընտրություն, նոր կազմի հաստատում: ՈՒԽ կազմում ընդգրկված են նախագահը, փոխնախագահը, սպորտային և մշակութային ղեկավարները, քարտուղարը և 4 անդամներ:

Ուսանողները մասնակցել են նաև ուսումնական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով անցկացված առցանց հարցումներին, շրջանավարտները՝ ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ անցկացված հարցմանը: ՈՒԽ-ն մասնակցել է այդ աշխատանքներին ուսանողների մասնակցության անհրաժեշտ մակարդակ ապահովելու հորդորներով:

ՈՒԽ նախագահը և փոխնախագահը, որպես համալսարանի ԳԽ անդամ, մասնակցել են ԳԽ նիստերին:

Ուսանողների մոտիվացիան ուսման նկատմամբ բարձրացնելու նպատակով, երկկողմ պայմանագրի շրջանակներում, մայիսի 29-30-ը կազմակերպվել է Լեհաստանի Բիդգոշչի (WSG) համալսարանի միջազգային բաժնի ներկայացուցիչ Լիդիա Շահբազյանի հանդիպումը ուսանողների հետ: Սահիկաշարով ներկայացվել է իրենց համալսարանի կողմից առաջարկվող կարճաժամկետ պրակտիկայի ծրագիրը, կրթության զարգացման, ուսանողների փոխանակման, բուժքույրության, բժշկական օգնության, պրակտիկայի ծրագրերի իրականացման հետ կապված մի շարք հարցեր:

ՈՒԽ-ն շատ ակտիվ մասնակցություն է ունեցել ապրիլի 5-ից 7-ը «Կրթություն և կարիերա EXPO 2023» ցուցահանդեսին պաստրաստվելիս և Ավանդական բժշկության համալսարանի տաղավարում համալսարանը ներկայացնելիս:

Մայիսի 19-ին միջազգային համագործակցության շրջանակներում ԱԲՀ-ն հյուրընկալեց ԱՄԷ-ի Շարժա քաղաքի «Success Point college»-ի Մարքեթինգի և PR-ի ղեկավարին, դասախոսներին, իրենց ուսումը ԱԲՀ-ում շարունակել ցանկացող ուսանողներին և նրանց ծնողներին: Այցելությունն ուներ ճանաչողական բնույթ:

Ուսխորհրդի անդամ Էրիկ Կարապետյանը՝ ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման շրջանակում, համալսարանի ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչներ Գ.Կիրակոսյանի և Գ.Մանաշյանի հետ հանդիպում ունեցավ Պրովիզոր- նկարիչ Լ.Սարգսյանի անվան բժշկական քոլեջի շրջանավարտների հետ, նրանց ներկայացվեց ԱԲՀ-ն, բժշկական ուսումնական գործունեության առանձնահատկությունները ու այլ հարցեր:

ՈՒԽ նախագահը, առաջնորդվելով «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» կարգախոսով, հաճախակի է նախաձեռնել մշակութային և սպորտային միջոցառումներ:

ԱԲՀ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և Երևանի Ավանի շախմատի մարզադպրոցի աջակցությամբ ս/թ նոյեմբերի 3-ին Ավանդական բժշկության համալսարանում անցկացվել է ներբուհական շախմատի մրցաշար, որին մասնակցել են համալսարանի հայ և օտարազգի թվով 27 ուսանողներ:

Շախմատի մրցաշարում 3 լավագույն տեղերը զբաղեցրած ուսանողներին մեդալներ, պատվոգրեր և նվերներ է հանձնել Ավանի շախմատի մանկապատանեկան դպրոցի տնօրեն,

Երևանի շախմատի ֆեդերացիայի նախագահության անդամ, շախմատի ՖԻԴԵ-ի սպորտի վարպետ Դավիթ Հունանյանը:

Համալսարանը ֆինանսական միջոցներ է տրամադրել ՈՒԽ-ին մեդալներ, պատվոգրեր և նվերներ ձեռքբերելու համար:

18.03.2023թ.-ին Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում տեղի ունեցավ Ավանդական բժշկության համալսարանի ֆուտբոլի ներբուհական առաջնությունը, որը կազմակերպել էր ԱԲՀ Ուսանողական խորհուրդը: Առաջնությանը մասնակցեցին «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների տարբեր կուրսերի օտարերկյա ուսանողները՝ Հնդկաստանից, Հորդանանից, Գանայից, Իրաքից և Մեծ Բրիտանիայից: Խաղին ներկա էին համալսարանի «Սպորտային բժշկություն» առարկայի դասախոս Լիլիթ Սուքիասյանը՝ որպես բժշկուհի, «Արտաքին կապեր» բաժնի առաջատար մասնագետ Լիանա Վարդանյանը և որպես երկրպագուներ՝ համալսարանի ուսանողները:

ՈՒԽ-ն կազմակերպել է նաև արտալսարանային միջոցառումներ դասախոսների հետ համատեղ: Ուսանողներն այցելել են Էրեբունի թանգարան, ցեղասպանության զոհերի հիշատակի օրը Ծիծեռնակաբերդի պուրակում ծաղիկներ են խոնարհել հուշաքարին:

ՈՒԽ-ն ակտիվ մասնակցություն ունեցավ 2021-2022 ուստարվա «Բուժական» ֆակուլտետի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողության կազմակերպման աշխատանքներին:

ՈՒԽ-ն հոկտեմբեր ամսին համախմբեց ուսանողությանը՝ կազմակերպելով մերձեցման երեկո՝ առաջին կուրս ընդունված, այլ բուհերից բարձր կուրսեր տեխափոխված ուսանողների և համալսարանի ուսանողների մասնակցությամբ:

Եթե կարող ենք բարի գործ անել, օգնել մարդկանց, կյանքեր փրկել, ապա ինչու՞ դա չանենք: Հենց այս բարձր գիտակցմամբ ու մարդասիրական մղումով էլ ՈՒԽ-ի ջանքերով մեր համալսարանի ուսանողները «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում որպես դոնոր արյուն հանձնեցին:

Մայիսի 28-ին Արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետ Լ.Վարդանյանի աջակցությամբ կազմակերպվեց էքսկուրսիա ՀՀ Տավուշի մարզ, քաղաք Դիլիջան «Սիրել Հայաստան աշխարհն իր հրաշալիքներով» թեմայով:

Հաշվետու ուստարում ուանողների խնդրանքով ԱԲՀ ղեկավարության կողմից ուսանողներին տրամադրվել են ազատ օրեր՝ ազգային հիմնական տոները (Նովրուզ, Ռամադան) նշելու կապակցությամբ:

ՈՒԽ-ն որպես տեղեկատվության տարածման հարթակ օգտագործում է ֆեյսբուք սոցիալական ցանցը:

Հավելենք, որ ուսանողության հիմնախնդիրներին մեծ ուշադրություն դարձնելը և այդ խնդիրներին լիարժեք լուծում տալը մշտապես եղել է համալսարանի ղեկավարության և ուսանողական խորհրդի անմիջական ուշադրության կենտրոնում:

Այսպիսով, իրականացվել է ոչ միայն 2022-23 ուստարվա ՈւԽ-ի աշխատանքային պլանով նախատեսվածը, այլ տարվել են ընթացիկ տարբեր աշխատանքներ:

17. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուստարվա ընթացքում, ԱԲՀ ՈՒԳԸ կազմը փոփոխվել է և համալրվել գիտական և կազմակերպչական ակտիվ գործունեություն ծավալող առաջադեմ ուսանողներով: ՈՒԳԸ-ը շարունակել է ակտիվորեն համագործակցել ԱԲՀ Գիտական մասի հետ, ինչպես նաև սերտորեն աշխատել ուսանող-ծրագրավարների (facilitators) հետ համատեղ՝ գիտական միջոցառումների կազմակերպման և ուսանողներին գիտական աշխատանքներում և ծրագրերում ներառելու ուղղությամբ: 2022թ. հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ ուսանող-ծրագրավարների հետ առաջին հանդիպումը, որտեղ քննարկվեցին մի շարք կարևոր հարցեր: Առավել մանրամասն ինֆորմացիայի համար տե՛ս ՈՒԳԸ արձանագրություն առ 2022թ. հոկտեմբերի 15: Հանդիպման օրակարգը ներկայացված է ստորև:

Համալսարանի գիտական մասի վարիչ Վ.Գրիգորյանի աջակցությամբ ձևավորվել է ուսանողական հետազոտական 3 խումբ.

- **Անհետաձգելի բժշկություն** /խմբի ղեկավար՝ Տուբա Շեիխ/
- **Էնդոկրինոլոգիական գինեկոլոգիա** /խմբի ղեկավար՝ Զիյադ Թարիք Ջամալ, ՈՒԳԸ նախագահ/
- **Նյարդագիտություն** /խմբի ղեկավար՝ Ռոհինի Զադբուկե/

Համատեղ աշխատելով ԱԲՀ Գիտական մասի վարիչ, բժ. Վ.Ս.Գրիգորյանի հետ՝ ԱԲՀ մի շարք ուսանողներ ներգրավվել են գիտական աշխատանքներում և հետազոտական նախագծերում, մասնակցել տեղական և միջազգային գիտական միջոցառումների, գիտաժողովների, սեմինարների, ունեցել են զեկույցներ և տպագրություններ:

ԱԲՀ ուսանողներն ակտիվորեն մասնակցել են բազմաթիվ գիտական միջոցառումների, այդ թվում՝ Bio-SEE կենսապատկերման միջազգային ասոցիացիայի և ՀՀ ԳԱԱ Լ.Ա.Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի կողմից կազմակերպվող կոնֆերանսները և սեմինար-

ները, ՁԻՀ կողմից կազմակերպված «Գիտության շարժիչ ուժը» խորագրով գիտական միջոցառումները և այլն:

ԱԲՀ ուսանողներ Ռոհինի Զադբուկեն և Հարշիլ Կոտադիան մասնակցել են կոնֆոկալ մանրադիտման (կենսապատկերման առաջադեմ մեթոդ) պրակտիկ դասընթացների՝ կազմակերպված Bio-SEE միջազգային ասոցիացիայի կողմից:

ՈՒԳԸ անդամ Անջան Կումարը դարձել է հետազոտական թիմի անդամ (թիմի ղեկավար՝ Վ.Ս.Գրիգորյան՝ ԱԲՀ Գիտական մասի վարիչ) և ակտիվորեն մասնակցում է տեսական և էքսպերիմենտալ հետազոտական աշխատանքներին՝ «Նյարդերի հյուսվածքային ինժեներիա» թեմայով: Այս համատեքստում՝ հետազոտական թիմը Վ.Ս.Գրիգորյանի ղեկավարությամբ, ստացել է 2 հետազոտական դրամաշնորհ՝ EIF-PMI Գիտական նախագծերի ֆինանսավորում և AESA հետազոտական դրամաշնորհ

ԱԲՀ ուսանողուհի Մահսա Քամալին ներգրավվել է ՀՀ ԳԱԱ Լ.Ա.Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտում հետազոտական նախագծի հետազոտական խմբի մեջ: Նախագծի թեմա՝ մաշկի հյուսվածքային ինժեներիա: Նախագիծն արժանացել է ANSEF դրամաշնորհի (ղեկավար՝ Կարաբեկյան Զ.Ի., կ.գ.թ., պրոֆ.).

ՈՒԳԸ անդամ Աշիշ Գհանեշ Բհոյրը մասնակցել է ուռուցքաբանության թեմայով ESMO (Ուռուցքաբանների Եվրոպական Ասոցիացիա) միջազգային գիտաժողովի, Փարիզ (առցանց): Շողեր Հարությունյանը (ԱԲՀ ուսանողուհի, ուսանող-ծրագրավար) մասնակցել է գիտական էսսեների միջազգային մրցույթի՝ հանդես գալով «Մարդու օրգանիզմի վրա միջավայրի գործոնների ազդեցությունն օնկոլոգիայի տեսանկյունից (Влияние факторов окружающей среды на организм человека: обзор с точки зрения онкологии)» թեմայով:

ՈՒԳԸ անդամ Ռոհինի Զադբուկեն հանդես է եկել պաստառային զեկույցով՝ համահեղինակված ԱԲՀ գիտական մասի վարիչ Վ.Գրիգորյանի հետ: Զեկույցն արժանացել է 2-րդ հորիզոնականի “Modern Methods of Biovisualization in Physiology and Medicine” միջազգային գիտաժողովին, Երևան:

Դիտվել է ուսանողների բարձր ակտիվություն՝ տարբեր տեղական և միջազգային գիտական նախագծերի դիմելու և մասնակցելու առումով (այդ թվում՝ փոխանակային ծրագրեր, դրամաշնորհներ, գիտաժողովներ, սեմինարներ և այլն):

Բազմաթիվ ուսանողներ, այդ թվում՝ ՈՒԳԸ անդամներ, ակտիվորեն մասնակցել են և ներկայացրել ԱԲՀ-ը «Կրթություն և կարիերա» EXPO-ցուցահանդեսին, որը տեղի ունեցավ 2023թ. ապրիլի 5-7-ը, LOGOS Expo կենտրոնում:

ՈՒԳԸ քարտուղար Սամուել Ադոմահը ներկայացրել է ԱԲՀ-ն 31-րդ Բժշկական ուսանողների միջազգային կոնֆերանսին (IMSC-International Medical Students'conference), Կրակով, Լեհաստան:

ԱԲՀ Գիտական մասի հետ համատեղ՝ կազմակերպվել են ուսանողների այցելություններ տարբեր կազմակերպություններ, այդ թվում՝ Լ.Ա.Օրբելու անվ. Ֆիզիոլոգիայի ինստիտուտ, Հայկական Կարմիր խաչի ընկերություն, որտեղ ուսանողները տեղում ծանոթացել են տվյալ կազմակերպություններում իրականացվող աշխատանքների հիմնական ուղղություններին:

ՈՒԳԸ-ը նաև ակտիվորեն մասնակցել է ԱԲՀ Գիտական մասի «ԱԲՀ Բաց գիտություն» ("UTMA Open Science") միջոցառումների շարքի կազմակերպմանը՝ որպես կազմկոմիտեի մաս: Վերջինիս կազմում են եղել՝ Գիտական մասի վարիչը, ՈՒԳԸ-ը և ընտրված ուսանող-ծրագրավարներ:

Հաշվետու ուստարում հաջողությամբ կազմակերպվել են «ԱԲՀ բաց գիտություն» նախագծի 3-րդ և 4-րդ միջոցառումները, որտեղ ՈՒԳԸ-ն զգալի դերակատարում է ունեցել:

3-րդ միջոցառումը տեղի ունեցավ 2022թ. հոկտեմբերի 20-ին: Հրավիրված խոսնակներն էին՝ բժ. Դ.Արսենյանը և Լ.Գուրոզլյանը՝ QaylTech կազմակերպության (վերականգնողական սարքավորումների հայկական արտադրող) հիմնադիրները: Թեման էր՝ «Ժամանակակից տեխնոլոգիաները վերականգնողական բժշկության մեջ»:

2023թ. մարտի 9-ին տեղի ունեցավ «ԱԲՀ բաց գիտություն» նախագծի 4–րդ միջոցառումը: Հրավիրված խոսնակները Հայկական Կարմիր Խաչի ընկերությունից էին՝ բժիշկներ Զ.Խուդոյանևը (Առաջին օգնության բաժնի վարիչ) և Գ.Հովհաննիսյանը (հրահանգիչ): Սա «Առաջին օգնություն» թեմայով գիտապրակտիկ դասախոսություն - վարպետաց դաս էր:

ԱԲՀ Գիտական մասի հետ համատեղ՝ կազմակերպվել է ԱԲՀ Ուսանողական տարեկան գիտաժողով, որի խորագիրն էր՝ «Ինտեգրատիվ բժշկությունն ապացուցողական բժշկության համատեքստում»: ՈՒԳԸ-ն հանդես եկավ կազմկոմիտեի կազմում:

Հաշվետու ուստարվա ընթացքում հիմնվել է ՈՒԳԸ առաջին նախագիծը՝ Գիտական բանավեճերի ակումբը (նախագծի հիմնադիր և կոորդինատոր՝ ԱԲՀ ՈՒԳԸ քարտուղար Ադոմահ Ս.Ն.): Բանավեճերի ֆորմատը և գնահատման համակարգը նորարարական են և լիովին մշակվել են նախագծի հեղինակի կողմից՝ հաշվի առնելով և համադրելով աշխարհի ամենահաջողված բանավեճերի ակումբների ֆորմատները և փորձը: Առաջին գիտական բանավեճը տեղի ունեցավ Տարեկան ուսանողական գիտաժողովի ընթացքում (տե՛ս Օրակարգը վերևում):

ԱԲՀ ՈՒԳԸ-ի կողմից նաև մշակվել և ներկայացվել է ՈՒԳԸ առաջին գիտական ստարտափ-գաղափարը: Ստարտափի հեղինակը և ղեկավարն է՝ ԱԲՀ ուսանող, ՈՒԳԸ անդամ Համզեհ Ղորբանին: Նախագծի նպատակն է՝ մշակել կույր և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար օժանդակ սարք: Ստարտափի անունն է՝ "A-EYES": ԱԲՀ Գիտական մասի վարիչի օգնությամբ ՈՒԳԸ անդամները դիմել են Սևան Ստարտափ Սամմիթ 2023-ին և հնարավորություն ստացել ներկայացնելու ստարտափը և Ավանդական բժշկության համալսարանը՝ այս լայնածավալ միջազգային ստարտափ-միջոցառմանը:

18.ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Տնտեսական մասը, համաձայն իր 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի, օգտագործել է տնտեսական մասի աշխատակիցների ներուժը՝ ներհամալսարանական տնտեսությունը կազմակերպելիս:

Հստակեցվել են տնտեսական աշխատակազմի գործառույթները, կարևորվել է տնտեսա-կան մասի աշխատողների կողմից իրականացվող աշխատանքները, մասնավորապես՝ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովումը, տարածքի մաքրման, բարեկարգման աշխատանքները, դրանց կատարման որակը:

- 2022-23 ուստարվա ուսումնական գործընթացի կազմակերպման համար հատկացված ֆինանսական ռեսուրսներով ձեռք են բերվել՝
  - գրենական պիտույքներ՝ 595 600 դրամ
  - մատյաններ, ուսանողական տոմսեր և գրքույկներ՝ 448 000 դրամ
  - ստոմատոլոգիական նյութեր՝ 684 600 դրամ
  - տոնոմետր, գլյուկոմետր, ստետոսկոպ՝ 68 000 դրամ
- Լսարանները և աշխատասենյակները տեխնիկապես հագեցնելու և կահավորելու համար ձեռք է բերվել ՝
  - Համակարգիչներ, լազերային տպիչ՝ 5 412 000 դրամ
- Համալսարանի համակարգչային ցանցի սպասարկման համար ծախսվել է 1 935 100 դրամ
- Թվային գրադարանի ասոցիացիային անդամագրվելու համար հատկացվել է 70 000 դրամ
- Ցուցահանդեսի մասնակցության, տաղավարի կահավորման համար տրամադրվել է 276 600 դրամ
- Բուհերի տեղեկատույում տպագրվելու համար ծախսվել է 56 000 դրամ
- Աշխատանքային օրենսդրության սեմինարի մասնակցության և օրենսգրքերի ձեռք բերման համար հատկացվել է 86 000 դրամ
- Վերապատրաստման համար հատկացվել է 300 000 դրամ
- Հաշվապահության հետ համատեղ իրականացվել է գույքագրում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ամփոփելով 2022-2023 ուստարում Ավանդական բժշկության Համալսարանում, ըստ գործունեության տարբեր ոլորտների, իրականացված մի շարք աշխատանքներ, կարելի է առանձնացնել և արձանագրել հետևյալը՝

- Հաշվետու ուստարում իրականացվել են աշխատանքներ, որոնք համահունչ են համալսարանի առաքելությանը, միտված են բուհի ռազմավարական գերակայություններին և ռազմավարական ծրագրի գործողությունների իրականացմանը:
- Կնքվել են երկկողմ համագործակցության նոր պայմանագրեր ակադեմիական և ոչ ակադեմիական հաստատությունների հետ:
- Նախաձեռնվել է մասնակցություն դրամաշնորհային ծրագրերին:
- Մի շարք ձեռքբերումների հետ մեկտեղ առկա են նաև բարելավման խնդիրներ՝

- ամբողջացնել կայքի օտարալեզու էջերը, որոնք արտերկրի այցելուների, մասնավորապես օտարերկրյա պոտենցիալ դիմորդների համար առավել կարևոր նշանակություն ունեն,
- շարունակել համալսարանի էլեկտրոնային գրադարանի արդիականացման աշխատանքները,
- կազմակերպել աշխատակիցների վերապատրաստում ռազմավարական խնդիրների արդյունավետ լուծման, կրթության որակի ապահովման և բարելավման նպատակով: